

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՎԵՏԱՀԱՅ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
60 ՏԱՐՈՒՄ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Л. С. ОВСЕПЯН


СОВЕТСКОЕ АРМЯНСКОЕ ЯЗЫКОЗНАНИЕ ЗА 60 ЛЕТ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982



ՍՈՎԵՏԱՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
60 ՏԱՐՈՒՄ

$\frac{68717}{11} = A$



1982

Պատասխանատու խմբագիր Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Աշխատության մեջ ամփոփված են հերկայացվում են սովետահայ լեզվաբանության զարգացման փուլերն ու նրանց առանձնահատկությունները, ինչպես նաև լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառներում, հատկապես հայերենագիտության ասպարեզում 60 տարիների ընթացքում ձևավորված նվաճումները:

4602010000

Հ ————— Պատվերային
703 (02) — 82

Հայ լեզվաբանական մտքի ձևավորումը խոր հնություն ունի և կապվում է մշակութային-լուսավորչական և գիտական աշխարհում շարժման հետ, որ սկիզբ առավ հին Հայաստանում հայոց գրերի գյուտից անմիջապես հետո:

Քերականագիտության զարգացումը միջնադարյան Հայաստանում և հետագայում, մինչև նոր ժամանակները, ընթացել է մայրենի լեզվի ավելի լիակատար ու մանրամասն նկարագրության ուղիների որոնման, նախկինում չներկայացված լեզվական երևույթների հայտնաբերման և գիտական լուսաբանման, լեզվական փաստերի ճշգրիտ և անհատական դասակարգման փորձերի, լեզվաբանական տերմինաբանության մշակման ու հետագա ճշգրտման, նախ հունական, ապա լատինական քերականությունների ազդեցության աստիճանական հաղթահարման, լատիներենի և հունարենի օրինակով ստեղծված արհեստական ձևերի արտամղման, ինչպես նաև հարցերի շրջանակի ընդլայնման և լեզվաբանական քննության իր բնագավառների ընդգրկման ուղղությամբ:

Հայ քերականագիտության լավագույն աշխատանքները հայ լեզվաբանության զարգացման ամբողջ ընթացքում արտացոլել են համապատասխան ժամանակաշրջանի լեզվաբանության զարգացման ամենաբարձր մակարդակը:

XIX դարում, լեզվաբանության՝ որպես առանձին գիտություն ձևավորվելու, մասնավորապես պատմահամեմատական լեզվաբանության ստեղծման հետ կապված, հայ քերականագիտության մեջ գործնական-ուսուցողական ուղղության կողքին հանդես է գալիս նաև լեզվի գիտական նկարագրության ուղղությունը, թեև պետք է նշել, որ նախորդ շրջանների հայ քերականների շատ աշխատություններ հար-

ցաղորումների խորության և լեզվական նյութի նկարագրության մանրամասնության տեսակետից դուրս էին գալիս սովորական նորմատիվ դպրոցական քերականությունների շրջանակից և մոտենում էին լեզվի գիտական նկարագրությանը:

Գրաբարի լեզվական կառուցվածքի նկարագրությանը զուգընթաց (որով զբաղվել է հայ լեզվաբանությունը մոտ 14 դար) XIX դարի 2-րդ կեսում սկիզբ է առնում նոր հայերենի կառուցվածքի և կազմավորման պատմության ուսումնասիրությունը, սկզբնավորվում են հայոց լեզվի պատմությունն ու համեմատական քերականությունը, հայ բարբառագիտությունը որպես առանձին հայագիտական գիտակարգեր:

Հայ լեզվաբանների հետաքրքրությունների շրջանակի ալգայիսի ընդլայնումը, համաշխարհային, մասնավորապես, ռուս լեզվաբանական մտքի նվաճումներին հաղորդակից դառնալը, բաղմադարյան ավանդույթի ստեղծագործական օգտագործումը ապահովեցին հայ լեզվաբանության այն բավական բարձր մակարդակը, որով նա թեև ևս չէր զարգացման արգի փուլը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տեղի ունեցած գաղափարական տեղաշարժը սովետական լեզվաբանության առաջ խնդիր էր դնում դիալեկտիկական մատերիալիզմի հիման վրա քննադատորեն յուրացնել հայրենական և արտասահմանյան լեզվաբանության նվաճումները, մշակել և կատարելագործել լեզվաբանական հետազոտության մեթոդները՝ հենվելով մարքսիստական ընդհանուր մեթոդաբանության վրա: Բացի այդ տեսական և գաղափարախոսական խնդիրներից սովետական իշխանության առաջին իսկ տարիներին առաջին պլան են մղվում սոցիալիստական հասարակարգի կառուցման և սովետական պետության ներքին ազգային քաղաքականության հետ կապված զործնական խնդիրներ, որոնցից ամենակարևորներն էին՝ ղանգվածային անգրագիտության վերացումը, նախկին Ռուսական կայսրության տարածքում ապրող բազմաթիվ ազգերի ու

աղգությունների անգիր լեզուների համար գրի ստեղծումը, նորագիր գրական լեզուների բարբառային հիմքի որոշումը, նրանց վարդաքման միտումների և ուղիների որոնումը, քերականական, ուղղագրական և ուղղախոսական նորմաների սահմանումը, նկարագրական և նորմատիվ քերականությունների ստեղծումը, աղգային լեզուների, ուսուցիչների, դպրոցում ուսուցանվող օտար լեզուների համար դասագրքերի ստեղծումը, ինչպես մայրենի, այնպես էլ ուսուցիչների, որպես աղգամիջյան հաղորդակցման լեզվի, ուսուցման մեթոդիկաների մշակումը, հումանիտար ֆակուլտետների համար լեզվաբանական գիտակարգերի դասընթացների ստեղծումը, ղանաղան տիպերի բառարանների կազմումը և այլն:

Հայ լեզվաբանությունը, որ վարդանում էր սովետական լեզվաբանական գիտության հետ սերտ կապի պայմաններում, չէր կարող չմասնակցել այդ հրատապ խնդիրների իրագործմանը:

Սովետահայ լեզվաբանության 60-ամյա ուղին կարելի է բաժանել 2 հիմնական շրջանի՝ 1) 1920—1950 թթ., 2) 1950 թ. մինչև այսօր:

Առաջինը կարելի է պայմանականորեն անվանել որոնումների, երկրորդը՝ ինքնահաստատման շրջան: Պետք է նշել, որ սովետահայ լեզվաբանության պատմությունը մինչև այժմ բնորոշված էր բաժանել 3 ինքնուրույն շրջանի՝ 1) 1920—1936 թթ., 2) 1937—1950 թթ., 3) 1950 թ. հետո [տես 66, II, 92 և հաջ.]: Սակայն, մեզ թվում է, որ նշված շրջանաբաժանման առաջին երկու փուլերը միմյանցից խստորեն չեն անջրպետվում ո՛չ տարվող աշխատանքների բնույթի, ո՛չ գիտական պրոբլեմների շրջանակի առումով: Չեն մշակվում նաև մինչև 30-ական թթ. հայ լեզվաբանության մեջ գոյություն չունեցած նոր ուղղություններ ու կոնցեպցիաներ: Սովետական (այդ թվում սովետահայ) լեզվաբանության մեջ բեկումը տեղի է ունենում միայն 1950 թ., այդ պատճառով էլ նպատակահարմար կլինեի առանձնացնել սովետահայ լեզվաբանության վարդաքման երկու շրջան, յուրաքանչյուր շրջանում նշելով հաջորդական երկու փուլեր

(տես ստորև): Նշենք, ի դեպ, որ այդպիսի բաժանումը ավելի մոտ է ընդհանրապես սովետական լեզվաբանության դարդացման՝ Գ. Զահուկյանի տված շրջանաբաժանմանը [77, II, 418 և հաջ.]:

Առաջին շրջանը սովետական լեզվաբանության դարդացման ուղիների եռանդուն որոնումների ժամանակաշրջանն է, որոնց ընթացքում ծագում և տիրապետող դիրք է զրավում Ն. Մառի առաջ քաշած գոհհիլ-մատերիալիստական սոցիոլոգիական ուղղությունը, կամ, այսպես կոչված, «լեզվի նոր ուսմունքը»: Այս շրջանում հայ լեզվաբանության պատմության մեջ պայմանականորեն կարելի է առանձնացնել դարդացման երկու փուլ, որոնց ժամանակագրական սահմանները ընկնում են 30-ական թթ.: Այդ փուլերի հիմնական տարրերությունը կարելի է համարել զարոցական քերականության մեջ հին տրամաբանական քերականության սկզբունքների վերականգնումը ի հակադրություն դրան փոխարինած և մինչև 30-ական թվերը հայկական զարոցներում ընդունված՝ Մ. Աբեղյանի նեղ ձևական քերականություն: Տեսություն բնագավառում 30-ական թվերից հետո ընկած ժամանակաշրջանը բնորոշվում է գաղափարական պայքարի սրումով (որ երբեմն քաղաքական երանդ էր ստանում), այնուհետև՝ Ն. Մառի ուսմունքի դիրքերի ամրապնդումով, նրա պաշտոնական ճանաչմամբ:

Ն. Մառի տեսության հիմնական դրույթները վերաբերում էին լեզվի էության, ծագման և դարդացման հարցերին, որոնք նա լուծում էր առանց բավարար չափով տիրապետելու դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմունքներին, սակայն մարքսիստական տերմինաբանության առատ կիրառումով: Մարքսիզմի դասակարգողների ասույթները լեզվի հասարակական բնույթի, նրա ծագման, հասարակության պատմության հետ նրա դարդացման կապի, լեզվի մեջ ընդհանուրի և անհատականի, լեզվի և մտածողության կապի մասին Ն. Մառի տեսության մեջ ստանում էին ազավազված, գոհկացված մեկնաբանություն: Լեզվի դասակարգային բնույթի ընդունումը, նրա հանգեցումը վեր-

նաշենքային կարգերին, լեզուն դադափարախոսության ձե-
վերից մեկը համարելը, լեզվի և մտածողության նույնացու-
մը ն. Մառի և նրա հետևորդների հայացքներում զուգորդ-
վում էին լեզվական կարգերի ծագման գուհիկ-մատերիա-
լիստական մեկնաբանման, քերականական կարգերի զար-
գացումն ու փոփոխումը անմիջականորեն բազիսի՝ արտա-
դրության և արտադրահարաբերությունների փոփոխումից
բխեցնելու հետ:

Այստեղից բխում էր լեզվի կառուցվածքի մեջ հասարա-
կարգի փոփոխության արտացոլման, լեզուների ստադիալ
զարգացման, լեզվի տիպաբանական բնույթի հանկարծակի
արմատական վերափոխման տեսությունը, որ ն. Մառը ներ-
կայացնում էր որպես մատերիալիստական դիալեկտիկայի
կիրառում: Լեզվի ստադիալ զարգացման տեսությունը ն. Մա-
ռին և նրա հետևորդներին բերում է բոլոր լեզուների համար
պարտադիր միասնական «լեզվաստեղծական պրոցեսի» գա-
ղափարին, լեզուների ծագումնաբանական ցեղակցության, հե-
տևաբար նաև պատմահամեմատական լեզվաբանության ու
մասնավորապես պատմահամեմատական մեթոդի ժխտմանը,
որոնք փոխարինվում էին «բառատարր» վերլուծության մե-
թոդով:

Լեզուն վերագրելով վերնաշենքային երևույթների թվին,
հետևաբար բնդունելով նրա դասակարգային բնույթը, ն. Մա-
ռը կանգնում էր նաև անդասակարգ հասարակության մեջ
լեզվի գոյության փաստը բացատրելու անհրաժեշտության
առաջ և ստիպված էր դասակարգերի գոյությունն ընդունել
նաև նախնադարյան հասարակության մեջ՝ այսպիսով փոր-
ձելով «ուղղում մտցնել» դասակարգերի առաջացման մարք-
սիստական տեսության մեջ: Ն. Մառը ժխտում էր համընդհա-
նուր աղգային լեզվի գոյությունը՝ ընդունելով միայն դասա-
կարգերի լեզուները և որպես այդպիսիք համարելով լեզվի
տարածական կամ պատմականորեն ձևավորված տարբերակ-
ները (բարբառներ, գրական լեզուներ և այլն):

Չնայած ակնհայտ հակասականությանը, անհստակու-
թյանը, երբեմն նաև ֆանտաստիկ մտակառուցումներին,

Ն. Մառի տեսությունը գտաւ իր հետեւորդները, տարածւեց և գրեթէ բառորդ դար շատերի կողմից դիտւեց որպէս լեզվի մարքսիստական ուսմունք: Դա ուներ իր պատճառները: Մառի ուսմունքը, որ նա նախապէս կոչել էր «հաբեթաբանություն», սկզբից ի վեր պարունակում էր լեզվի, հատկապէս լեզվական զարգացման ընթացքի գոհհիւստիոգիական մեկնաբանության տարրեր (հասարակական տարբեր խմբավորումների լեզուների հակադրում և այլն): Լեզուների բացառապէս միավորվող (կոնվերգենտ) զարգացման, նրանց խառնման ու խաչավորման, հաբեթական լեզուների առանձնահատուկ դերի մասին Ն. Մառի գաղափարները, ինչպէս նաև լեզուների ծագումնաբանական ցեղակցության ժխտումն ու պատմահամեմատական մեթոդի ճշգրիտ եզանակների անտեսումը և այլն դեռևս այն ժամանակաշրջանում հակադրում էր նրա ուսմունքը «հին» լեզվաբանությանը: Նրա տեսության այդ կողմերի խորացումը, մարքսիստական դարձվածաբանության նրա օգտագործումը, դիտության զարգացման նոր ուղիների որոնման ընթացքում իդեալիստական հոսանքների դեմ հասարակական դիտությունների բնագավառում սկսված սուր գաղափարական պայքարի մթնոլորտում, հնարավորություն ստեղծեցին հաբեթաբանությունը հայտարարել «լեզվի նոր մարքսիստական ուսմունք»:

Մարքսիստական փիլիսոփայության դրույթների ոչ բավարար յուրացումը ավագ սերնդի դիտականների կողմից, գոհհիւստիոգիական հայացքների տարածումը նաև հասարակական մյուս դիտություններում (գրականագիտություն, արվեստաբանություն, պատմագիտություն, տնտեսագիտություն) նպաստում էին «նոր ուսմունքի» դիրքերի ամրապնդմանը: Թվում էր, այդ տեսությունը ընդառաջ էր գնում իրենց դիտության զարգացման նոր ուղիներ գտնելու՝ սովետական լեզվաբանների ձգտմանը: Որպէս մասնավոր տեսություն ստեղծված «հաբեթաբանությունը» դարձավ ընդհանուր լեզվաբանական ուսմունք:

«Նոր ուսմունքի» տարածման այդ գործոնների ազդեցությունը չի բացառվում նաև սովետահայ լեզվաբանության

կազմավորման շրջանի համար: Սակայն, չնայած այն բանին, որ Ն. Մառը մեծ հեղինակություն էր վայելում հայ գիտնականների շրջանում, որոնք հատկապես բարձր էին գնահատում հայագիտությանը նրա մատուցած ծառայությունները (մասնավորապես հայ բանասիրության, պատմության, հնագիտության բնագավառում նրա կատարած հետազոտությունները), «նոր ուսմունքը» մեծ արձագանք չգտավ հայ լեզվաբանության մեջ: Լեզվաբանների հին սերունդը, որոնց գործունեությունն սկսվել էր Հայաստանում սովետական կարգերի հաստատումից շատ առաջ, չգնաց այդ ճանապարհով: «Նոր ուսմունքի» ազդեցությունը նա կրեց ոչ անմիջապես և ոչ ամբողջապես: Այդ պատճառով էլ սովետահայ լեզվաբանության զարգացման շրջանի վաղ փուլը բնորոշվում է տարբեր ուղղությունների համագոյակցությամբ (հմմտ. 66, 11, 55): Այսպես, Հ. Աճառյանը, առանց բանավեճի մեջ մտնելու, շարունակում էր համառու ու բեղմնավոր աշխատանքը հայերենի համեմատական քերականության, պատմության, բարբառագիտության բնագավառում: Այդ տարիներին նա հրատարակեց «Հայերենի արմատական բառարանը» յոթ հատորով (1926—1932), «Հայոց անձնանունների բառարանը» հինգ հատորով (1942—1962), «Հայոց լեզվի պատմությունը» երկու հատորով (1940—1951), բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված բնագրագիտության, ստուգաբանության և այլ հարցերի: Հայ բառարանագրության մեջ մեծ ներդրում ունեցավ Ս. Մալխասյանցը՝ կազմելով «Հայերենի բացատրական բառարանը» չորս հատորով (1944—1945):

Մ. Աբեղյանը, որ կրթություն էր ստացել Գերմանիայում և բանասիրական լայն հետաքրքրությունների տեր էր, լեզվաբանական տեսության ասպարեկում հարում էր հոգեբանական ֆորմալիզմի ուղղությանը, իսկ հետազոտական մեթոդներով՝ երիտքերականներին: 1931 թ. իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության հրատարակումից հետո, որ ի մի էր բերում նրա թե՛ տեսական հայացքները, թե՛ լեզվի նկարագրության գործնական սկզբունքները, Մ. Աբեղյանը գործունե մասնակցություն չունեցավ լեզվաբանական գիտավեճերում

և հիմնականում զբաղվում էր հայ հին գրականության, բանասիրության, բանաստեղծական տաղաչափության և այլ հարցերով:

Յուրահատուկ էր Գ. Ղափանցյանի մոտեցումը: Դեռևս 1926 թ. նա հանդես եկավ «Հաբեթաբանության» քննադատությամբ, այնուհետև 1931 թ. «Լեզվի և նրա զարգացման դիալեկտիկայի մասին» հոդվածում, ընդունելով բուրժուական լեզվաբանության քննադատության անհրաժեշտությունը, նա միաժամանակ մատնանշում էր Ն. Մառի տեսության ամենահիմնական թերությունները: Սակայն, քանի որ Գ. Ղափանցյանն ինքը հակված էր հայերենի խառնածին, համեմայն դեպս ոչ «մաքուր» հնդեվրոպական լեզու լինելու տեսակետին, ապա Ն. Մառի որոշ դադափարները լեզուների խաչավորման, հայերենի զարգացման մեջ հաբեթական լեզուների դերի մասին որոշակի արձագանք էին գտնում նրա մեջ, թեև նա իր կապերը շէր խզում պատմահամեմատական լեզվաբանության, մասնավորապես, երիտքերականության հետ մի կողմից և Բողոքն-գը-Վուրտենիի գպրոցի հետ՝ մյուս կողմից: Նա ընդունում էր նաև լեզվի դասակարգային, վերնաշենքային բնույթը, թեև գտնում էր, որ լեզուն, արտացոլելով հասարակության կառուցվածքն ու արտադրահարաբերությունները, նախապես, անդաստիարակ հասարակարգում, դասակարգային բնույթ չունի և այդ բնույթը ձեռք է բերել հետագայում, դասակարգերի ծագման հետ միաժամանակ:

Հետևաբար լեզուն պատմական, միաժամանակ նաև հասարակական երևույթ է, և այդ պատճառով լեզվական երևույթները պետք է բացատրել հասարակության զարգացման հետ սերտ կապի մեջ: Սակայն Գ. Ղափանցյանը այդ հարցում վերծ էր Ն. Մառի տեսության ծայրահեղություններից և գտնում էր, որ լեզվի և հասարակական կեցության կապը ավելի սերտ էր միայն լեզվի ծագման և նախնական զարգացման շրջանում, իսկ հետագայում հանդես է գալիս ավելի միջնորդավորված ձևով: Դեռ ավելին, ինքը լեզուն մտածողության և աշխարհայացքի հետ միասին ազդում է բազիսի, մարդկության հասարակական տնտեսական կյանքի բարդ

Համակարգի վրա: Գ. Ղափանցյանը հակադրվում էր Ն. Մառին նաև պատմահամեմատական մեթոդի կիրառման, հատկապես հնչյունական օրենքների մասին նրա դրույթների հարցում, ի տարբերություն Ն. Մառի ընդունելով վերջիններիս օրինաչափ բնույթը, թեև միաժամանակ հանդես էր գալիս նաև նրանց բացարձակացման դեմ՝ հարելով հնչյունական օրենքներին հակադրող գործոնների մասին սոցիոլոգիական դպրոցի հայացքներին: Նա ամբողջապես մերժում էր նաև բառատարր վերլուծության մառյան սկզբունքը: Ճիշտ դիրք էր գրավում Գ. Ղափանցյանը նաև լեզուների ցեղակցության, նրանց ծագումնաբանական դասակարգման հարցում՝ առանձին նշանակություն չտալով ձևաբանական դասակարգմանը, որ առաջնակարգ նշանակություն ուներ Ն. Մառի համար: Զեռաբանական տարբեր համակարգերը լեզուների ստադիալ զարգացման արտահայտություն համարելու մառյան փորձը նա միամիտ և մեխանիկական էր համարում: Այսպիսով, ընդունելով «նոր ուսմունքի» որոշ դրույթներ, որոնք ի դեպ ընդունվում էին զրեթե բոլոր սովետական լեզվաբանների կողմից, Գ. Ղափանցյանը շատ հարցերում ինքնուրույն մոտեցում էր ցուցաբերում և քննադատում էր Ն. Մառի տեսությունը:

Իր գործունեության հենց սկզբից հաբեթաբանության քննադատությանը հանդես եկավ հայ լեզվաբանների նոր՝ սովետական սերնդի ներկայացուցիչ Գ. Սևակը: Միաժամանակ նա քննադատում էր նաև հեղեվրոպական հին լեզվաբանությունը, գտնելով, որ մարքսիստական լեզվաբանությունը պետք է կառուցվի նոր հիմքերի վրա, դառնա գիտություն լեզվի ծագման և զարգացման մասին, լեզվական հարաշրջումների և հեղաշրջումների մասին: Հեղեվրոպական լեզվաբանությունն ըստ Գ. Սևակի, չնայած իր մի շարք դրական կողմերին, «իր իդեալիստական, ձևական տրամաբանական մեթոդով այնպես էլ չկարողացավ իսկական գիտություն դառնալ» (Հաբեթաբանությունը և մարքսիզմը, «Նոր ուղի», 1930, № 6, էջ 185): Ինչ վերաբերում է Ն. Մառի տեսությանը, ապա թեև Գ. Սևակը ընդունում էր, որ Ն. Մառը հիմնել է

մարքսիստական լեզվաբանությունը, բայց այստեղ էլ լուրջ սխալներ էր տեսնում: Ըստ Գ. Սեակի իրականում նոր ուսմունքը մարքսիստական էր կոչվում միայն բուրժուական լեզվաբանության դեմ սկսած իր պայքարի շնորհիվ, սակայն ըստ էության այդ ուսմունքը հենվում է «տարերային մատերիալիզմի և իդեալիստական դիալեկտիկայի վրա»: Այդ տեսությունն առաջին հիմնական թերությունը Գ. Սեակը համարում է ն. Մառի կողմից լեզուների կոնկրետ առանձնահատկությունների անտեսումը և բոլոր լեզուներին հատուկ համընդհանուր նախնական տարրերի որոնումը: Այդ տեսակետից Գ. Սեակը վճռականորեն մերժում է քառասորը վերլուծությունը՝ այն համարելով կամայական ու մեխանիկական մտակառույց: Այնուհետև, Գ. Սեակը բացահայտում է, որ լեզվի զարգացման մառյան տեսության մեջ սխալ են հասկացվում քանակական և որակական անցումների դիալեկտիկան, լեզվի մեջ զարգացման «հին և նոր ստադիաների» տարրերի համագոյակցության բարդ պատկերը: Գ. Սեակը գալիս է այն եզրակացության, որ ն. Մառի տեսությունը խաղաղեղ է «ՍՍՀՄ-ում բուրժուական լեզվաբանության հեղինակադրկման ու ջախջախման իր դերը, բայց դեռ չի ստեղծել լեզվի իսկական մարքսիստական տեսություն»: Իր վաղ շրջանի աշխատություններում Գ. Սեակը ձգտում է զարգացնել մարքսիզմի դասականների գաղափարները լեզվի՝ որպես հաղորդակցման, մտածողության կարևորագույն միջոցի մասին, լեզվի էության՝ որպես «նյութականացված օբյեկտիվացված գիտակցության» մասին, լեզվի և մտածողության, լեզվի և գիտակցության դիալեկտիկական կապի մասին:

Պետք է նշել, որ քննադատելով ն. Մառի տեսության ծայրահեղ նիհիլիզմը, Գ. Սեակը, ի հակադրություն իր սերնդի շատ լեզվաբանների, ընդունում էր դասական լեզվաբանության ժառանգության ստեղծագործական յուրացման անհրաժեշտությունը, թեև, մյուս կողմից, քննադատում էր պատմահամեմատական լեզվաբանությունը, նրա հետազոտական մեթոդները, լեզուների ծագումնաբանական ցեղակցության դադափարը և այլն: Իր գործունեության առաջին շրջանում հան-

դեպ Բերեկով որոշակի ինքնուրույն մտածողություն ընդհանուր տեսական բնույթի հարցերում, Գ. Սեակը 40-ական թթ. վերջերին, ինչպես նաև նրա երիտասարդ ժամանակակիցներից շատերը (է. Աղայան, Ս. Ղաղարյան և ուրիշներ), ստիպված եղավ զիջումներ անել իր դիրքերը վերջնականապես ամրապնդած «նոր ուսմունքին»։ 30-ական թվերի սովետահայ լեզվաբաններից միայն Ա. Ղարիբյանն էր, որ անվերապահորեն ընդունեց Մառի տեսության բոլոր դրույթները և փորձեց դրանք կիրառել հայոց լեզվի նկատմամբ, հատկապես նրա ծագման և պատմական զարգացման հարցերը լուսաբանելիս։ Նա չափազանց գործույժ կերպով մասնակցում էր «նոր ուսմունքի» հաստատման համար տարվող գաղափարական պայքարին և խիստ քննադատության էր ենթարկում ամեն մի շեղում նրա սկզբունքներից։

Սովետահայ լեզվաբանության զարգացման առաջին շրջանում, բացի տեսական որոնումներից, առաջին պլան է մղվում նաև մի շարք գործնական խնդիրների լուծման ուղղությամբ տարվող լեզվաբանական աշխատանքը։ Այդ խնդիրներն էին դպրոցական դասագրքերի և ձեռնարկների ստեղծումը, ընդհանուր և մասնագիտական բնույթի բառարանների կազմումը, տերմինաբանության միասնականացումը, ուղղագրության նորմավորումը և այլն։

1922 թ. ուղղագրական բարեփոխումը, չնայած հետագայում հաղթահարված իր որոշ ծայրահեղություններին (1940 թ. մասամբ վերականգնվեցին հին ուղղագրության կանոնները), նպաստեց բնակչության անգրագիտության վերացման արդյունավետ աշխատանքին, որը հիմնականում ավարտվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տասնամյակի վերջում։ Դրան նպաստեց նաև մայրենի լեզվի հանրամատչելի ձեռնարկների և գործնական քերականությունների ստեղծումը։ Հրատարակվեցին նաև դպրոցական դասագրքեր՝ կառուցված ձևական քերականության սկզբունքներով, որի հիմնական ներկայացուցիչը այդ շրջանում Մ. Աբեղյանն էր։ 1931 թ. լույս է տեսնում նրա «Հայոց լեզվի տեսությունը» որպես բուհական դասագիրք։ Դպրոցի աշխա-

տանքների վերակառուցման և նոր կայուն դասադրերի ստեղծման վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումներից հետո ձևական քերականությանը փոխարինում են Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի «տրամաբանական-իմացաբանական» սկզբունքով կառուցված դասադրերը (ձևաբանությունն ու շարահյուսությունը), որոնք զգալի ազդեցություն թողեցին հայոց լեզվի կառուցվածքի հետագա ուսումնասիրության ընթացքի վրա: Շարունակվում էր նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների համար դասադրերի և ձևաբանների ստեղծման աշխատանքը: Դրանցից ամենակարևորներն էին Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» (1939), Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի տեսությունը» (I—1939, II—1947), Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» (I—1940, II—1951), Է. Աղայանի «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» (1947) ու «Լեզվաբանության ներածությունը» (1949), Մ. Աբեղյանի «Գրաբարի քերականությունը» (1946), Հ. Աճառյանի «Գրաբարի ուսուցիչը» (1936), Վ. Առաքելյանի «Գրաբարի հոլովումն ու խոնարհումը» (1945) և այլն: Դրանցից շատերը մենագրական լուրջ ուսումնասիրությունների արժեք ունեն:

Շարունակվում է աշխատանքը նաև հայ լեզվաբանության համար ավանդական ուղղություններով՝ համեմատական քերականություն, լեզվի տեսություն և պատմություն, բարբառագիտություն, բառարանագրություն: Հատուկ ուշադրություն է դարձվում զանազան կարգի բառարանների կազմմանը: Բացի Հ. Աճառյանի և Ս. Մալխասյանցի նշված աշխատություններից այդ շրջանում լույս են տեսնում «Ռուս-հայերեն նոր բառարանը», համառոտ ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններ, դպրոցական ուղղագրական բառարան, ինչպես նաև մի ամբողջ շարք թարգմանական (ռուս-հայերեն) և բացատրական մասնագիտական բառարաններ՝ գիտատեխնիկական տերմինաբանության տարբեր բնագավառների վերաբերյալ:

Հրատարակվում են աշխատություններ նվիրված ինչպես հայ բարբառագիտության տեսական հարցերին, այնպես էլ

առանձին բարբառացին միավորների մենագրական ուսումնասիրությանը (Հ. Աճառյան, Ա. Ղարիբյան, Է. Աղայան), մշակվում են հայոց լեզվի պատմության հարցերը (Հ. Աճառյան, Ա. Ղարիբյան, Գ. Սևակ), ուսումնասիրվում է հայ լեզվաբանության պատմությունը (Է. Աղայան):

Այսպիսով, չնայած «Լեզվի նոր ուսմունքի» խաղացած բացասական դերին (լեզվաբանական հետազոտության շրջանակների նեղացում, լեզվի վարդապետական հարցերի սխալ մեկնաբանում, առանձին լեզուների քերականական կառուցվածքի կոնկրետ առանձնահատկությունների անտեսում և այլն), սովետահայ լեզվաբանության զարգացման առաջին շրջանում զգալի արդյունքներ են ձեռք բերվել ինչպես տեսության բնագավառում, այնպես էլ գործնական աշխատանքի ուղղությամբ:

Սովետահայ լեզվաբանության զարգացման երկրորդ շրջանը սկսվում է «Պրավդա» թերթի էջերում 1950 թ. հունիսին ծավալված լեզվաբանական հայտնի գիտավեճից և շարունակվում է մինչև մեր օրերը: Գիտավեճի պատճառն էր այն անբավարար վիճակը, լճացումը, ոչ ստեղծագործական մթնոլորտը և դոգմատիզմը, որոնք տիրում էին լեզվաբանության բնագավառում հատկապես եռպատերազմյան առաջին տարիներին:

Երկրորդ շրջանում նույնպես կարելի է առանձնացնել զարգացման երկու փուլ: Առաջին կարճատև փուլն ընդգրկում է մինչև 50-ական թթ. կեսերն ընկած ժամանակաշրջանը, երբ մառական ուսմունքի դոգմատիզմը փոխարինվեց Ի. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» գրքում առաջ քաշված դրույթների դոգմատիզմով: Նրա մտքերն ու ասույթներն սկսեցին ընդունվել բոլորի կողմից առանց քննադատության ու վերապահումների, փորձեր ձեռնարկվեցին հիմնավորելու նույնիսկ նրա սխալ ենթադրությունները: Ի. Ստալինի լեզվաբանական հայացքներն աչքի էին ընկնում պարզունակությամբ, լեզվական երևույթների միակողմանի բմբռնմամբ, որոշ դրույթների անբավարար հիմնավորվածությամբ ու հակասականությամբ: Այսպես,



Հիմնավորելով լեզվի տարբերությունը վերնաշենքային մյուս երևույթներից, նա չափազանց միակողմանի է մեկնաբանում բազիսում կատարված փոփոխությունների արտացոլումը վերնաշենքում, բավարար չափով հաշվի չառնելով բազիսային և վերնաշենքային կատեգորիաների փոխհարաբերության ամբողջ բարդությունը, վերնաշենքային առանձին երևույթների յուրահատկությունը, ինչպես նաև տարբեր լեզուների կոնկրետ փաստերը, միակողմանի է ներկայացնում լեզվական զարգացման գործընթացը՝ չբացատրելով լեզվի հասարակական, տարածական և գործառական տարբերակների հարստության առաջացման փաստերը: Ի. Ստալինը անորոշ է արտահայտվում նախալեզվի, պատմահամեմատական լեզվաբանության թերությունների մասին, սխալներ է թույլ տալիս ուսս ազգային լեզվի բարբառային հիմքի որոշման մեջ և այլն [տես 77, 11, 506—507]: Սակայն «Նոր ուսմունքի» տիրապետության շրջանում մոռացված հայտնի ճշմարտությունների «իրավունքների վերականգնումը», լեզվի դասակարգային բնույթի, լեզուն վերնաշենքային կատեգորիաներին վերագրելու, լեզուների ստադիալ զարգացման, բառատարր վերլուծության մեթոդի ժխտումը դրական դեր խաղացին սովետական լեզվաբանության հետագա զարգացման համար:

1956 թվականից հետո, անհատի պաշտամունքի հետեւանքների հաղթահարումով սկսվում է սովետական լեզվաբանության զարգացման արդի փուլը: Այն ապաստվում է զոգմատիկ կառույցներից և հնարավորություն է ստանում կարճ ժամանակամիջոցում համաշխարհային սուլումով բարձր մակարդակի հասնելու:

Այս փուլը նշանավորվում է դիալեկտիկական մատերիալիզմի հիման վրա ստեղծվող իսկապես մարքսիստական լեզվաբանության ձևավորմամբ, լեզվաբանական հետազոտման բոլոր բնագավառների բուռն զարգացմամբ, հայրենական և արտասահմանյան լեզվաբանության առաջադիմական գաղափարների ստեղծագործական կիրառմամբ, հետազոտության նոր, արդյունավետ մեթոդների ներդրմամբ:

Տեսության բնագավառում սովետական, այդ թվում հայ լեզվաբաններին շարունակում են հետաքրքրել առաջին հերթին լեզվի ծագման, նրա հասարակական բնույթի և պատմական զարգացման պրոբլեմների մշակումը, լեզվի և մտածողության, ձևի և բովանդակության, տրամաբանական և լեզվաբանական կարգերի, մասնավորապես հասկացության և բառիմաստի, դատողության և նախադասության փոխհարաբերության հարցերը և այլն։ Այդ հարցերը նորովի լուծվում են է. Աղայանի «Լեզվաբանության ներածություն» աշխատության մեջ, որտեղ նա, հենվելով մարքսիստական լեզվաբանության հիմնական սկզբունքների ու դրույթների վրա, հանդես է գալիս ինչպես լեզվի և մտածողության նույնացման, այնպես էլ նրանց միջև խզում տեսնելու դեմ, նշում է նրանց ծագումնաբանական և իմացաբանական փոխադարձ կապը։ Հետազոտողներին շարունակում է հետաքրքրել լեզվի և հասարակության փոխհարաբերության հարցը, որի լուծման ժամանակ նրանք ձգտում են հաղթահարել հասարակության զարգացումից լեզվական զարգացման պրոցեսների ուղղակի կախվածության մասին գոհհիլ-սոցիոլոգիական պատկերացումը։ Ընդունելով լեզվի և հասարակության անխզելի կապը՝ նրանք միաժամանակ առաջ են քաշում արտաքին գործոնների հետ միասին լեզվի զարգացումը պայմանավորող լեզվական փոփոխությունների ներքին օրինաչափությունների դրույթը։ Արտաքին գործոնները ազդում են լեզվի վրա միայն միջնորդավորված ձևով, առաջին հերթին փոփոխություններ առաջացնելով լեզվի և նրա գոյության տարբեր ձևերի կարգավիճակի և գործառության ոլորտների բնագավառում, նրա տարածական և հասարակական տարբերակման պատկերի մեջ։ «Լեզվի զարգացումը ընթանում է երկու հակադիր տեսչենյանների փոխազդեցության տակ՝ տարբերակում (դիֆերենցիացիա) և միասնացում (ինտեգրացիա), որոնց տեսակարար կշռի տարբերությունները կապված են հասարակության զարգացման բնույթի ու աստիճանի հետ։ Լեզվի զարգացումն ընթանում է անհավասարաչափ, լեզվի կառուցվածքային տարբեր կողմերը փոփոխվում են ոչ նույն տեմպով. այս

հանգամանքը հանգեցնում է լեզվասիրտների անընդհատ հակասությունների, լեզվի մեջ միշտ լինում են անցյալի հետքեր և ապագայի սաղմեր։ Դնելով լեզվի մեջ քանակական աննկատ փոփոխությունների որակական անցումներ սալու հարցը՝ մարքսիստական լեզվաբանությունը այդ անցումները չի հասկանում ոչ որպես սիստեմի «պայթյուն» ոչ էլ որպես մուտացիոն փոփոխություններ» [77, II, 510]։ Այս դրույթների կապակցությամբ հայ լեզվաբանների առաջ ծառանում են հայոց լեզվի պատմական զարգացման բնույթի և օրինաչափությունների բացահայտման, նրա պատմության շրջանաբաժանման, զարգացման տարբեր շրջաններում գրական լեզվի և բարբառների, համաժողովրդական լեզվի և նրա տարածական ու հասարակական տարբերակների փոխհարաբերության պարզման, գրական լեզուների բարբառային հիմքի որոշման և բաղմաթիվ այլ խնդիրներ։ Այդ խնդիրների լուծման մեջ իրենց ավանդն են ներմուծում ինչպես հայ լեզվաբանների ավագ սերնդի ներկայացուցիչները, այնպես էլ նոր սերունդը, որն իր գործունեությունը ծավալում է հիմնականում սովետահայ լեզվաբանության զարգացման նշված փուլում (է. Բ. Աղայան, Գ. Բ. Ջահուկյան, Ա. Ա. Աբրահամյան, Ս. Ղ. Ղազարյան, Վ. Դ. Առաքելյան, Ս. Գ. Աբրահամյան և այլք)։ Մասնավորապես Գ. Ջահուկյանը մշակում է հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումը՝ հաշվի առնելով լեզվի բոլոր պատմական, գործառական և տարածական տարբերակների գոյությունը և առանձնացնելով համընդհանուր լեզուն նրա գրական մշակման ենթարկված ձևերից։ Գ. Ջահուկյանն զբաղվում է տեսական լեզվաբանության նաև ավելի լայն հարցերով։ Նա հատուկ ուշադրություն է դարձնում լեզվաբանական ուսմունքների պատմության և լեզվաբանական մեթոդաբանության հարցերին։ Իր «Լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ (1960—1962) նա մարքսիստական լեզվաբանության դիրքերից քննում է լեզվաբանական գիտության ծագման և զարգացման պատմությունը, տալիս է տարբեր դպրոցների և ուղղությունների գնահատականը։ Մասնավորապես նա կանգ է առնում սովետական լեզ-

վարանության ձևավորման հարցերի լուսաբանության վրա, նշելով դիալեկտիկական մատերիալիզմի փիլիսոփայական հիմքի վրա մշակվող նրա հիմնական սկզբունքները՝ բացահայտում է մարքսիստական լեզվաբանական կոնցեպցիայի ձևավորման ուղիները: Խոսելով կոնցեպցիայի և մեթոդի մասին [84]՝ Գ. Ջահուկյանը անհրաժեշտ է համարում նրանց հստակ տարբերակումը. «Կոնցեպցիան սերտորեն կապված է աշխարհայացքի հետ և իր հիմքում ունի աշխարհի մատերիալիստական կամ իդեալիստական ըմբռնումը, ճանաչողության հիմքերի զգայական կամ բանական բացատրությունը և այլն» [84, 13]: Գտնելով, որ մեթոդը որոշակի չափերով կապված է կոնցեպցիայի հետ՝ նա միաժամանակ նշում է, որ միևնույն մեթոդի արդյունքները կարող են տարբեր մեկնաբանություն ստանալ: Այդ կապակցությամբ նա առաջ է քաշում տարբեր մեթոդների կիրառման անհրաժեշտության գաղափարը՝ ուսումնասիրության առարկայի ավելի խոր ճանաչման և կոնցեպցիայի ավելի ճիշտ հիմնավորման համար:

Սովետահայ լեզվաբանության զարգացման արդի փուլում, այսպիսով, տեսականորեն հիմնավորվում է նոր մեթոդների և ուղղությունների մշակման անհրաժեշտությունը և կատարվում են նրանց գործնական կիրառման հաջող փորձերը: Միաժամանակ նոր տեսական և մեթոդաբանական հիմքի վրա շարունակվում են հետազոտությունները ավանդական ուղղություններով:

Նշված փուլում հայ լեզվաբանության մեջ վերականգնվում է հետաքրքրությունը պատմահամեմատական ուսումնասիրությունների նկատմամբ: Նորից հիմնավորվում է հայոց լեզվի հնդեվրոպական ընտելքը, ուսումնասիրվում են նրա հարաբերությունները ինչպես առանձին հնդեվրոպական լեզուների, այնպես էլ Կովկասի և հին Առաջավոր Արևելքի ոչ-ցեղակից լեզուների հետ, հատուկ ուշադրություն է դարձվում տարբեր ծագում ունեցող ենթաշերտային երևույթների բացահայտմանը: Նոր ձևով, հարուստ և բազմազան փաստական նյութի ընդգրկմամբ մեկնաբանվում են հայոց լեզվի

պատմության հարցերը, փորձեր են արվում առանձին քերականական կարգերի պատմական զարգացման հետազոտման, ինչպես նաև լեզվի զարգացման առանձին մեծ շրջանների նկարագրության ուղղությամբ: Զգալի առաջընթաց է նկատվում հայ բարբառագիտության բնագավառում: Առանձին բարբառների նկարագրությանը նվիրված մեծ քանակով մենագրությունների ստեղծմանը զուգընթաց մշակվում են նրանց դասակարգման նոր մեթոդները՝ պատմականորեն ձևավորված բարբառային բարդ իրադրության հաշվառմամբ, որոշվում են հայոց լեզվի բարբառագիտական ատլասի կազմման սկզբունքները, լայնորեն քննարկվում են պատմական բարբառագիտության հարցերը:

Մեծ աշխատանք է տարվում ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի հետազոտության ուղղությամբ. սրի արդյունքն է եռահատոր ակադեմիական քերականության հրատարակումը: Սկսվում է հայերենի ուսումնասիրությունը նոր մեթոդների, հատկապես՝ կառուցվածքային, վիճակագրական, փորձառական մեթոդների կիրառմամբ: Հայ լեզվաբանների ուշադրությունն են գրավում նաև մեքենական թարգմանության, խոսքի ավտոմատ վերլուծության ու համադրության, լեզվի ձևականացված բնության խնդիրները:

Վերջին տասնամյակում սկսվում է հայոց լեզվի բնությունը հոգելեզվաբանական և հանրալեզվաբանական հայեցակետերով, ծավալվում են աշխատանքները հայերենի և ուսսերենի լեզվական կառուցվածքի բոլոր մակարդակների տիպաբանական-զուգադրական բնության, ինչպես նաև հայերենի և մի շարք օտար լեզուների տարբեր քերականական կարգերի զուգադրական ուսումնասիրության ուղղությամբ: Փորձեր են արվում տալու հայոց լեզվի զարգացման առանձին շրջանների լեզվավիճակների, մասնավորապես դասական պարսի, տիպաբանական բնութագրումը:

Շարունակվում է ինտենսիվ աշխատանքը զանազան տիպի բառարանների ստեղծման ուղղությամբ: Կազմվում են ինչպես թարգմանական ու բացատրական, այնպես էլ հատուկ տիպի՝ ուղղագրական, դարձվածաբանական, տերմինա-

բանական բառարաններ: Լեզվաբանության վերջին նվաճումների հաշվառումով վերանայվում և ստեղծվում են բուհական նոր դասագրքեր: Ակտիվանում է աշխատանքը գիտության տարբեր ճյուղերի տերմինաբանության զարգացման պատմության ուսումնասիրության ուղղությամբ, մշակվում են տերմինաշինության տեսական և գործնական սկզբունքները, լույս են տեսնում թարգմանական և բացատրական տերմինաբանական բառարաններ: Լեզվաբանները որոշակի հետաքրքրություն են ցուցաբերում գործառական և անհատական ոճաբանության, խոսքի մշակույթի, գրական լեզվի նորմավորման հարցերի նկատմամբ:

Հայագետների գիտական հետաքրքրության շրջանակների մեջ են մտնում նաև ընդհանուր լեզվաբանական նշանակություն ունեցող հարցեր, մասնավորապես, քննարկվում են խոսքի մասերի ուսմունքը, լեզվական մակարդակների պրոբլեմը, լեզվի նշանային բնույթի հետ կապված հարցերը և այլն:

Վերջին տասնամյակների ընթացքում լայնորեն ծավալված տեսական ու գործնական աշխատանքների շնորհիվ Սովետական Հայաստանը դառնում է հայագիտության կենտրոն միջազգային մասշտաբով, որտեղ արդյունավետ կերպով աշխատում են հայ լեզվաբանական մտքի ականավոր ներկայացուցիչները:

Սովետահայ լեզվաբանության անցած ուղու այս համառոտ նկարագրությունից հետո ավելի մանրամասն անդրադառնալով լեզվաբանական հետազոտության առանձին բնագավառներին:

Ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի ուսումնասիրություն. Ինչպես արդեն նշվել է, ժամանակակից հայերենի սկզբնավորման հարցերի քննությունը և նրա կառուցվածքի ուսումնասիրությունը սկսվում են XIX դարի երկրորդ կեսից, թեև նրա նկարագրության առանձին փորձեր արվել էին արդեն XVIII դարի սկզբում (Յ. Ա. Շրյոդեր և Մ. Սեբաստացի): 1866 թ. լույս է տեսնում արևմտահայերենի առաջին գիտա-

կան նկարագրութիւնը՝ Ա. Այալընյանի «Քննական քերականութիւնը», իսկ 1870 թ.՝ Ս. Պալաստանյանի «Ընդհանուր տեսութիւն արեւելյան նոր գրաւոր լեզվի հայոց» աշխատութիւնը: 1874 թ. նույն հեղինակը հրատարակում է «Մայրենի լեզվի քերականութիւն» դպրոցական դասագիրքը: Սակայն ժամանակակից հայերենի կառուցվածքի գիտական նկարագրութեան ստեղծման մեջ ամենախոշոր ավանդը ներմուծեց Մ. Արեղյանը՝ 1912 թ. հրատարակելով «Աշխարհաբարի շարահյուսութիւնը», իսկ 1931 թ.՝ «Հայոց լեզվի տեսութիւնը», որն ընդգրկում էր ժամանակակից հայերենի հնչյունական համակարգի, բառային իմաստաբանութեան, բառակազմութեան և ձևաբանութեան նկարագրութիւնը: «Ներածութեան» մեջ Մ. Արեղյանը շարադրում է իր ընդհանուր տեսական հայացքներն ու լեզվի նկարագրութեան սկզբունքները: Մ. Արեղյանի գրչին են պատկանում նաև մի շարք աշխատութիւններ և հոդվածներ՝ նվիրված ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի առանձին հարցերին, քերականութեան և ուղղագրութեան ուսուցման դործնական խնդիրներին: Մ. Արեղյանն առաջին հետազոտողն էր, որ ժամանակակից հայերենի նկարագրութիւնը լիովին ազատեց գրաբարի քերականական սխեմաների ազդեցութիւնից: Նրա առաջարկած քերականական սխեման, թեև ենթարկվել է մասնակի ճշգրտումների և փոփոխութիւնների, հիմնականում պահպանվել և գրեթե չորս տասնամյակ հայերենի քերականական կառուցվածքի բոլոր ուսումնասիրութիւնների համար հիմք է ծառայել: Արեղյանի հատուկ ծառայութիւնը հայերենի գիտական շարահյուսութեան ստեղծումն է: Մինչև Արեղյանը քերականական աշխատութիւններում շարահյուսական առանձնահատկութիւնները քննվում էին որպէս հավելված և հանգում էին քերականական ձևերի պործածութեան, միմյանց հետ դուրսդրվելու կանոնների որոշմանը: Մ. Արեղյանը հիմք դրեց նաև ժամանակակից հայերենի հնչյունական համակարգի և բառապաշարի (իմաստաբանութեան և բառակազմութեան) ուսումնասիրութեանը: Լեզվական նյութի նրա դասակարգումներն ու նկարագրութիւնը երկար ժամանակ հետազոտ ուսում-

նասիրությունների օրինակ էին ծառայում և իրենց որոշակի գիտական արժեքը չեն կորցրել նաև այժմ:

Մ. Աբեղյանի քերականական տեսությունը հիմնված է այսպես կոչված ֆորմալիստական ուղղության սկզբունքների վրա: Լեզվական նյութի նկարագրության և դասակարգման ժամանակ նա ելնում է լեզվական միավորների ձևական հատկանիշներից և հայերենի քերականական կառուցվածքի բոլոր հարցերը լուծում է այդ սկզբունքի հետևողական կիրառմամբ:

Մ. Աբեղյանի քերականական համակարգի ելակետային միավորը բառն է, որը նա ենթարկում է հնչյունաբանական, բառագիտական և շարահյուսական վերլուծության՝ իր աշխատության առանձին բաժիններում:

Բառագիտական վերլուծությունն ըստ Աբեղյանի նշանակում է բառերի իմաստային, բառակազմական և ձևաբանական հատկանիշների քննություն [հմմտ. 72, 166—167]: Ձևվաբանությունը Մ. Աբեղյանը ձևակերպում է որպես բառաձևերի ուսմունք, իսկ շարահյուսությունը՝ որպես բառերի միջև եղած կապերի, ինչպես նաև նախադասությունների տիպերի և կապի մասին ուսմունք: Բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելիս Մ. Աբեղյանը ելնում է նրանց գործառական-շարահյուսական հատկանիշներից: Ըստ այդմ նա առաջին հերթին առանձնացնում է բառերի չորս տեսակ, որոնցից խոսքի մաս է համարում միայն երեքը՝ բայեր կամ նախադասություն կազմող բառեր, լրացումներ կամ նախադասությունը լրացնող բառեր և կապեր կամ բառերն ու նախադասությունները կապող բառեր: Ձայնարկությունները կամ նախադասությունից դուրս մնացած բառերը նա չի մտցնում խոսքի մասերի համակարգի մեջ: Առանձնացված բառախմբերի հետագա դասակարգման մեջ Մ. Աբեղյանը առաջնորդվում է ինչպես նրանց իմաստային, նույնպես և գործառական հատկանիշներով: Այսպես, նա բայ է համարում ինքնուրույն կերպով նախադասություն կազմելու քնդունակ բառերը: Լրացումների մեջ առանձնացնում է գոյականներն ու ածականները «ըստ իմաստի», սակայն ածականների սահմանման ժամանակ

նորից դիմում է գործառական հատկանիշին և ածականների տեսակներ է առանձնացնում ըստ նախադասության մեջ նրանց կատարած գործառույթի և մյուս խոսքի մասերի հետ նրանց զուգորդելիության: Գոյական խոսքի մասի մեջ նա դարձյալ «ըստ իմաստի» առանձնացնում է անուն և դերանուն տեսակները:

Ինչպես բառերի դանաղան տեսակների (խոսքի մասերի) որոշման, այնպես էլ նախադասության կառուցվածքի վերլուծության մեջ Մ. Աբեղյանի համար կենտրոնական միավորը բայն է, ընդ որում բայը նույնացվում է ստորոգյալին, հետևաբար բուն բայեր են համարվում միայն նրա դիմավոր ձևերը: Գերբայական ձևերը նա բաշխում է ածականների տարատեսակությունների վրա:

Հոլովման համակարգի նկարագրության ժամանակ Մ. Աբեղյանը առաջինն է, որ խոսում է ուղղական և հայցական, ինչպես նաև սեռական և տրական հոլովների նույնացման մասին և հոլովման հարացույցից հանում է սեռական և հայցական հոլովները:

Խոնարհման համակարգի ճշգրտման մեջ Մ. Աբեղյանը զգալի ավանդ է ներդրել: Նա որոշել է եղանակների թիվը և տվել նրանց անվանումները (սահմանական, բղձական, պայմանական, հարկադրական և հրամայական), առանձնացրել է կերպի և ժամանակի կարգերը (ընդունելով կատարվող, կատարված և կատարելի կերպերը), տարբերակել է պարզ և բաղադրյալ ժամանակային ձևերը, զլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակները, խոնարհման հարացույցի մեջ է ներմուծել օժանդակ բայի և —ել, —ած վերջավորություններով անցյալ զերբայների և —լու վերջավորությամբ ապառնի դերբայի զուգորդմամբ կազմված ձևերը:

Մ. Աբեղյանի զբոլում հայ քերականագիտության մեջ առաջին անգամ մանրամասն քննության է ենթարկվում ժամանակակից հայերենի բառակազմությունը, առանձնացվում և դասակարգվում են բարդությունների տեսակները, նրանց կազմությունն ու բաղադրիչների փոխհարաբերությունը, մանրամասն քննվում են ածանցման միջոցները, առանձնաց-

վում նախածանցներն ու վերջածանցները, որոշվում նրանց ծագումը, իմաստային ու գործառական առանձնահատկությունները: Մ. Աբեղյանի մշակած բառակազմական համակարգը ընդունվել և մինչև վերջին ժամանակներս դարգացվել է հայ լեզվաբանության մեջ: Անհրաժեշտ է նշել, որ լեզվական կառուցվածքի շատ հարցերի լուսաբանման մեջ Մ. Աբեղյանը կրում է գերմանական քերականագիտության, հատկապես երիտքերականների ազդեցությունը: Դրանով է բացատրվում և այն, որ լեզվական համակարգի համաժամանակյա նկարագրության ընթացքում նա հաճախակի դիմում է քննվող փաստերի սլատմական բացատրություններին:

30-ական թթ. սկզբներին Ա. Ղարիբյանն ու Գ. Սևակը հանդես են դալիս Մ. Աբեղյանի ֆորմալիստական ուղղության քննադատությամբ: Նրանց հրատարակած դպրոցական և բուհական դասագրքերը [2, 3, 5, 12] կառուցված են, Գ. Սևակի արտահայտությամբ՝ «տրամաբանական-իմացաբանական քերականության» սկզբունքներով և հակադրվում են քերականական ձևի նեղ ըմբռնմանը: Լեզվի նկարագրության մեջ Ա. Ղարիբյանն ու Գ. Սևակը ելնում են քերականական իմաստի առաջնայնության զաղափարից և ըստ այդմ առանձնացնում ու դասակարգում են լեզվական միավորները: Նրանք փաստորեն վերականգնում են Պալասանյանի քերականության տրամաբանական սկզբունքները, թեև Ա. Ղարիբյանն իր քերականական համակարգը բնորոշում է որպես ձևի և բովանդակության միասնության մարքսիստական դրույթի հիման վրա ստեղծված նոր տիպի համակարգ՝ գտնելով, որ Ս. Պալասանյանի քերականության մեջ անտեսվում էր ձևական կողմը, իսկ Մ. Աբեղյանը թերագնահատում էր բովանդակային կողմը:

Չնայած դրան, խոսքի մասերի տարբերակման, դերբայների, դերանունների, թվականի տեղի որոշման, հոլովների թվի սահմանման և ժամանակակից քերականության մյուս վիճակի հարցերի լուծման ժամանակ Ա. Ղարիբյանն ու Գ. Սևակը հիմնականում հենվում են միայն բովանդակության՝ բառային և քերականական իմաստների վրա՝ ձգտելով տալ

քերականական կարգերի ու միավորների զուտ տրամաբանական սահմանումներ և աստիճանաբար երկրորդ պլան մղելով ձևական և գործառական հատկանիշները: Ըստ այդմ, խոսքի մասերի դասակարգման ժամանակ սահմանադատվում են թվականներն ու ածականները, իսկ դերանունները, որոնք Մ. Աբեղյանը բաշխում էր տարբեր խոսքի մասերի մեջ, միավորվում են որպես ինքնուրույն խոսքի մաս, դերբայները համարվում են բայի արտահայտման ձևեր, անվանական հոլովման մեջ վերականգնվում է յոթ հոլովների համակարգը, ենթական ու ստորոգյալը գնահատվում են որպես նախադասության համալոր անդամներ:

Քերականական այդ սխեման ոչ միայն մտցվեց դպրոցական և բուհական ուսուցման մեջ, այլև նշանակալից ազդեցություն թողեց այդ բնագավառում տարվող հետազա աշխատանքի վրա: Այն ընդունվեց Ա. Ղարիբյանի ու Գ. Սևակի հետևորդների՝ նրանց երիտասարդ ժամանակակիցների ու աշակերտների կողմից: Մասնավորապես կարելի է հիշատակել Հ. Կուսիկյանի «Ժամանակակից դրական հայերենի քերականութունը», որ կառուցված էր լեզվի նկարագրության վերահիշյալ սկզբունքների հիման վրա: Պետք է սակայն նշել, որ կոնկրետ լեզվական նյութի նկարագրության ժամանակ շատ լեզվաբաններ շարունակում էին օգտագործել Մ. Աբեղյանի դասակարգումներն ու տերմինաբանութունը, մասնավորապես, հնչյունական համակարգի, բառակազմության, մասամբ շարահյուսության քննության ժամանակ:

Հայ քերականագիտության մեջ տրամաբանական ուղղության վերականգնումը, որ որոշ դրական դեր խաղաց նեղ ֆորմալիզմի հաղթահարման, քերականական իմաստաբանության հարցերի վրա ուշադրության կենտրոնացման առումով, հետադայում, ինչպես նշում է Գ. Զահուկյանը, հասցրեց հակառակ ծայրահեղության՝ լեզվական միավորների առանձնացման ու դասակարգման մեջ իմաստի դերագնահատմանը, քերականական ձևի անտեսմանը, չափազանց մանրատված տրամաբանական-իմաստային դասակարգումների՝ որոնք չեն բխում լեզվական ձևից: Այդ թերությունները այս կամ այն

շափով հատուկ են տրամաբանական-իմաստաբանական ուղ-
ղության գրեթե բոլոր հետևորդներին:

60-ական թթ. II կեսից ժամանակակից հայերենի կա-
ռուցվածքի նկարագրության մեջ սկսվում են կիրառություն
գտնել հետազոտության նորագույն մեթոդները, մասնավորապես
կառուցվածքային վերլուծության մեթոդները: Դրան
նպաստեցին նաև հայոց լեզվի հոլովման համակարգին (հո-
լովների բանակի հարցին) և բայի խոնարհմանը նվիրված
լեզվաբանական գիտալինձերը, որոնց ընթացքում լայնորեն
քննարկվեցին ոչ միայն հայերենի քերականական կառուց-
վածքի այդ մասնակի հարցերը, այլև ամբողջ լեզվական հա-
մակարգի նկարագրության սկզբունքների ու մեթոդների հետ
կապված ընդհանուր տեսական հարցերը:

Հայերենի լեզվական համակարգի կառուցվածքային
նկարագրության առաջին փորձը կատարել է է. Աղայանը, որ
1967 թ. հրատարակեց «Ժամանակակից հայերենի հոլովու-
մը և խոնարհումը» աշխատությունը*: Դրքի բովանդակու-
թյունը շատ ավելի հարուստ է, քան կարելի է ենթադրել նրա
վերնագրից: Այն փաստորեն ընդգրկում է ժամանակակից
հայերենի գրեթե ողջ ձևաբանական կառուցվածքը: Նախքան
հետազոտության բուն նյութին անցնելը, է. Աղայանը երկու
ընդարձակ ներածական գլուխներում շարադրում է կառուց-
վածքային լեզվաբանության հիմնական դրույթներն ու հաս-
կացությունները, որբանով այդ անհրաժեշտ է իր հետագա
քննության համար: Կառուցվածքային լեզվաբանության այն-
պիսի հարցերի պարզաբանման մեջ, ինչպիսիք են հակադրու-
թյունները և նրանց շեղոքացումը, լեզվական միավորների
բաշխումը, հարադրուցային ու շարակարգային շարքերը, լեզ-
վական մակարդակները և այլն, է. Աղայանը հաճախ ինքնու-
րույն մոտեցում է ցուցաբերում և տալիս է լեզվական նյութի
սեփական մեկնաբանումներ: Առանձնացնելով լեզվաբանա-

* Այստեղ չենք խոսում ավելի շուտ՝ 1964 թ. լույս տեսած «Դրաբարի
բերականություն» աշխատության մասին, որտեղ նույնպես նկարագրու-
թյունը արվում է կառուցվածքային լեզվաբանության սկզբունքներով ու
տերմիններով:

կան քննության մակարդակներն ու նրանց միավորները, է. Աղայանը հատկապես կանգ է առնում իր քննության հետ անմիջաբար կապվող ձևույթային, բառային և ձևաբանական մակարդակների վրա: Բառային մակարդակի քննության ժամանակ հեղինակն անդրադառնում է ըստ խոսքի մասերի բառերի դասակարգմանը և առաջադրում է սեփական դասակարգում՝ հիմնված իմաստային և դործառական հատկանիշների վրա, որոնց առկայություն/բացակայությունը ներկայացվում է 17 երկսեղամ հակադրությունների ձևով: Ժամանակակից հայերենում է. Աղայանը առանձնացնում է 11 խոսքի մաս, նրանց թվի մեջ ներմուծելով եղանակավորող բառերն ու ձայնարկությունները: Հսկուման համակարգում նա ընդունում է 6 հսկով, սեռական և տրական հոլովների տարբերակիչ հատկանիշ համարելով վերջինիս՝ որոշիչ հոգ ընդունելու հատկությունը: Խոնարհման հարացույցից է. Աղայանը հանում է հարակատար դերբայով կազմված վերլուծական ձևերը, գտնելով, որ նրանք գուրկ են եղանակի կարգից: Հայերենի դերբայական ձևերը հեղինակը բաժանում է կերպայինների և իրադրականների: Հետաքրքիր են նաև է. Աղայանի զիտողությունները հայերենի բայի բառակազմության, հիմքակազմության և ձևակազմության վերաբերյալ:

Վերջին 30 ստորինների ընթացքում ժամանակակից հայերենի համակարգը համակողմանիորեն քննության է առնվում ոչ միայն ընդհանուր բնույթի աշխատություններում, այլև լեզվական կառուցվածքի տարբեր հարցերի լուսաբանմանը նվիրված աշխատություններում: Այսպես, ձևաբանության բնագավառում հետազոտողների ուշադրությունը կենտրոնացած է առանձին վերցրած բոլոր խոսքի մասերի, կամ նրանց մեջ մտնող իմաստային, կառուցվածքային ու դործառական տարատեսակություն կազմող խոշոր բառախմբերի նկարագրության վրա: Գրվել են մենագրություններ նվիրված բային (Ա. Աբրահամյան, Հ. Բարսեղյան, Ա. Մարգարյան), անվանական խոսքի մասերին (Հ. Օհանյան, Ս. Գյուլբուդադյան), դերանուններին (Ս. Աբրահամյան), չթեքվող խոսքի մասերին (Ս. Աբրահամյան, Ա. Մարգարյան, Գ. Գարեգին-

յան, Ա. Քյուրքչյան, Վ. Ավագյան), ինչպես նաև հարադիր բայերին (Ա. Մարգարյան), դերբայներին (Ա. Աբրահամյան), մասնիկներին (Ա. Մուրվալյան), հոգերին (Է. Թումանյան), նախդիրներին ու կապերին (Ա. Մարգարյան) և այլն: Քննվում են խոնարհման և հոլովման համակարգերը (Է. Աղայան, Գ. Զահուկյան, Ռ. Իշխանյան), առանձին բայական և անվանական բերականական կարգեր՝ սեռը (Մ. Ասատրյան), թիվը, անորոշություն | որոշյալություն կարգը (Հ. Պետրոսյան), աշխատություններ են նվիրվում հոլովների իմաստային առանձնահատկություններին (Վ. Առաքելյան), ձևաբանության զանազան հարցերին (Մ. Ասատրյան), քերականական հոմանիշներին և համանուններին (Ն. Պառնասյան):

Շարահյուսության բնագավառում ունենք Վ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի շարահյուսություն» երկհատորամբողջական ուսումնասիրությունը, ինչպես նաև մի շարք մենագրություններ, որոնցում քննարկվում են արդի հայերենի շարահյուսական կառուցվածքի առանձին միավորները, հարաբերություններն ու հասկացությունները: Կարելի է հիշատակել բարդ նախադասության շարահյուսությանը (Ն. Պառնասյան, Բ. Վերդյան), միակազմ (Ս. Գյուլբուրդյան), անդիմ (Հ. Հարությունյան), անշաղկապ-բարդ նախադասություններին, ստորադասական ու համադասական կապին (Ն. Պառնասյան), շարահյուսական տարրական կառուցվածքի հասկացությանը (Է. Աթայան), դերբայական դարձվածքներին (Ժ. Ճշմարիտյան), բառակապակցություններին (Վ. Քոսյան), շարահյուսական հոմանիշներին (Ն. Պառնասյան) և այլ հարցերի նվիրված աշխատություններ:

Ուսումնասիրվում են հնչյունային և հնչույթային համակարգերը (Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ա. Աբրահամյան, Վ. Հայրապետյան), շեշտի և հնչերանգի առանձնահատկությունները (Ա. Խաչատրյան, Ռ. Թոխմախյան, Ս. Ղուկասյան), բնդ որում այդ բնագավառում նշանակալից արդյունքներ են ձեռք բերված փորձառական ուսումնասիրության մեթոդների օգնությամբ: Մ. Աբեղյանի աշխատությունից հետո հայ բնականների հետաքրքրությունների շրջանակն են ներմուծվում

բառագիտության հարցերը: Առանձին աշխատություններ են նվիրված ժամանակակից հայերենի բառապաշարի, նրա զարգացման ու հարստացման միտումների ու հնարավորությունների, այդ թվում փոխառությունների ու սլառաձեռնումների ուսումնասիրությանը (Գ. Սևակ, Ա. Մուրվալյան, Հ. Կուսիկյան, Հ. Օհանյան):

Հետազոտվում են բառակազմական կաղապարները, բառաբարձման ու ածանցման առանձնահատկությունները (Ս. էլոյան, Է. Աղայան, Ս. Աբրահամյան, Ս. Գալստյան), բառի ձևույթային կառուցվածքը (Տ. Ավետիսյան): Ուշադրություն է դարձվում նաև բառային խմաստաբանության՝ բաղմիմաստության, համանշտության, հականշտության հարցերին (Պ. Բեգիրյան, Ս. էլոյան, Ռ. Շալունց, Ն. Գևորգյան), բառակազմական նշանակություններին (Ռ. Մանուշարյան):

Գրվում են աշխատություններ նվիրված ոճագիտության հարցերին և գեղարվեստական գրականության լեզվին: Հետազոտողների ուշադրություն են դրավում բառային և քերականական ոճաբանության հարցերը, առանձին խոսքի մասերի և քերականական կարգերի ոճական կիրառությունը: Ուսումնասիրվում է ինչպես հայ նոր գրականության դասականների, այնպես էլ սովետահայ արձակի ու բանաստեղծության խոշոր ներկայացուցիչների լեզուն ու ոճը: Այս բնագավառում մեծ ավանդ ունի Վ. Առաքելյանը: Հայտնի են նաև Ռ. Իշխանյանի, Ս. Մելքոնյանի, Ա. Մարությանի, Հ. Հակոբյանի, Ա. Պապոյանի աշխատությունները: Ունենք նաև գեղարվեստական գրականության դարգացման առանձին փուլերի լեզվին ու ոճին նվիրված ամբողջական հետազոտություններ (Ռ. Իշխանյան, Հ. Կոստանյան):

Սովետական հայագետներին հետաքրքրում են նաև խոսքի մշակույթի բարձրացման, ուղղախոսության և ուղղագրության նորմալորման (Թ. Ղարապետյան, Ս. Գյուլբուրադյան) հարցերը: Լույս է տեսել ժամանակակից հայոց լեզվի նորմատիվ քերականությունը (Ս. Աբրահամյան):

Քննության առարկա են դառնում տերմինաբանության հարցերը: Առանձին աշխատություններ են նվիրված տարբեր

բնագավառների՝ տեխնիկական, հասարակական-քաղաքական, գրականագիտական, լեզվաբանական, ռազմական տերմինաբանության ծագման և զարգացման պատմությունը (Լ. Պետրոսյան, Լ. Ղազանչյան, Ս. Ասլանյան):

Վերջին տասնամյակի բնթացքում հայ լեզվաբանները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հայերենի զուգադրական և տիպաբանական ուսումնասիրության նկատմամբ: Ստանձնապես պետք է նշել ուսերենի և հայերենի զուգադրական վերլուծությունը, որի նպատակն է հայոց և ռուսաց լեզուների ամբողջական զուգադրական քերականության ստեղծումը: Ներկայումս հետազոտողների ուշադրությունը կենտրոնացած է առանձին քերականական կարգերի զուգադրական վերլուծության վրա: Մասնավորապես աշխատանքներ են տարվում բառաքերականական իմաստաբանության բնագավառում (բայական ժամանակների իմաստային գործառույթների, հարաբերական սծականների բազմիմաստության, շարժման բայերի իմաստույթների համակարգի, բառակապակցությունների մեջ բառերի նշանակությունների և բառերի միջև իմաստային կապերի վերլուծություն, ուսերենից հայերեն թարգմանելիս համանունության հաղթահարման ուղիների որոնում և այլն): Ձևաբանության մեջ քննվում են բայի կերպովածանակային ձևերը, չթերվող խոսքի մասերը, շարահյուսության մեջ՝ հաշվառվող շարահյուսական կառուցվածքը, ուղղական հոլովով երկբաղադրիչ շարահյուսական կառույցները, նախադասության առկայական տրոհումը և այլ հարցեր:

Ստացվել են հանրալեզվաբանական հայեցակետով ժամանակակից հայերենի հետազոտության առաջին արդյունքները, ուսումնասիրվել են Երևան քաղաքի խոսակցական լեզվի հասարակական տարրերակները՝ լեզվի կրողների սոցիալական պատկանելության և նրանց խոսքի հնչյունական, բառային և քերականական առանձնահատկությունների կապի բացահայտման նպատակով: Հայտնաբերվել են դրական-խոսակցական տարրերակի բնորոշ առանձնահատկությունները և տարրերություն նորմավորման ենթարկված լեզվի:

Սկսված է հայ-ռուսերեն երկլեզվության, լեզվական տարբեր մակարդակներում փոխներթափանցումների ուսումնասիրությունը:

Ժամանակակից հայերենի բերականական կառուցվածքի ուսումնասիրության արդյունքների յուրահատուկ ամփոփումն է «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր ակադեմիական բերականությունը (1974—1979), որը պարունակում է լեզվական բոլոր մակարդակների մանրամասն քննությունը: Լեզվական հարուստ նյութի հիման վրա քննվում են հնչյունաբանությունն ու հնչույթաբանությունը, հնչյունական փոփոխությունների տիպերը, բառապաշարն ու բառակազմությունը, բառային իմաստաբանությունը (բառի ձևի և իմաստի փոխհարաբերությունը, բառիմաստի փոփոխությունները): Ձևաբանական կառուցվածքն ուսումնասիրվում է ըստ առանձին խոսքի մասերի: Յուրաքանչյուր խոսքի մաս ներկայացվում է իրեն հատուկ բերականական կարգերի ամբողջությամբ, նրանցից յուրաքանչյուրի արտահայտման եղանակների նկարագրությամբ: Տրվում են խոսքի մասերի ներքին տարատեսակությունների դասակարգումները, ներկայացվում են թեքվող խոսքի մասերի հարացույցները: Շարահյուսական կառուցվածքի նկարագրությունը տրվում է «Բառակապակցություն», «Նախադասություն» (իրենց բոլոր տեսակներով), «Նախադասությունների կապակցություն» բաժիններում:

Հեղինակային կոլեկտիվը հիմնականում պահպանում է բերականության ավանդական սխեման, թեև լեզվական շատ հարցերի մեկնաբանության և գնահատման ժամանակ օգտագործում է հետազոտության նորագույն մեթոդների կիրառման արդյունքները: Մասնավորապես, հնչյունական համակարգի նկարագրության ժամանակ օգտագործված են փորձառական եզանտկով ստացված տվյալները, մշակված է հնչույթների համակարգի նկարագրության համար տարբերակիչ հատկանիշների ամբողջությունը, նկարագրության մեջ են ներմուծված որոշ նոր հասկացություններ ու բերականական կարգեր, բերված են լեզվական նոր փաստեր, որոնք նախկինում չէին գրավել հետազոտողների ուշադրությունը

(օր. առաջին անգամ Գ. Զահուկյանի կողմից առաջադրված [7] առկայացման կարգը, որ իրենից ներկայացնում է որոշյալության կարգի ավելի լայն ըմբռնումը): Մենագրությունն աչքի է ընկնում նկարագրության մանրամասնությամբ, լեզվական նյութի լայն ընդգրկումով, նրա հստակ դասակարգմամբ, որ շարագրանքի մատչելիության հետ միասին այն առանձնապես արժեքավոր է դարձնում ընթերցողների լայն շրջանակների համար:

Ընդհանուր բնույթի աշխատությունների մեջ հիշատակության արժանի են նաև բուհական երկհատոր «Հայոց լեզու» դասագիրքը, որ գրված է համանման սկզբունքներով, ինչպես նաև ուսուցիչների համար Ս. Աբրահամյանի գրած «Ժամանակակից հայոց լեզու» ձեռնարկը:

Հատուկ տեղ են գրավում Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի դարգացումն ու կառուցվածքը» (1969) և «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ» (1974) մենագրությունները: Նրանց մեջ առաջ է քաշվում լեզվաբանական նկարագրության նոր եղանակ, որը հեղինակն անվանում է բովանդակության և արտահայտության պլանների հարաբերակցված քննության սկզբունք: Ընդ սմին—հեղինակը նշում է լեզվի քերականական կառուցվածքի բացահայտման երկու հնարավոր ուղի՝ արտահայտության պլանից դեպի բովանդակային կողմը և ընդհակառակն, անվանելով դրանք քերականության կառուցման «արտահարաբերական» և «ներհարաբերական» եղանակներ:

Նշված աշխատություններում հեղինակն ընարում է «արտահարաբերական» մոտեցումը, քանի որ «բովանդակության տարրերի բացահայտման ընդհանրական բանալիի (համընդհանուր ուսմունքի)» [9, 7] բացակայության պայմաններում ներհարաբերական (իմաստահարաբերական) մոտեցումը կարող էր հանգեցնել լեզվական նկարագրության լռդիցիվմին էամ պախիտլոգիզմին: Սակայն այդ չի նշանակում, որ հեղինակը անտեսում է բովանդակային կողմը: Բովանդակության պլանի համակարգայնությունը նա քննում է արտահայտության պլանի համակարգայնության հետ հարաբերակցված:

Անցումը բովանդակության պլանին իրականացվում է արտահայտության պլանի տարրերի բաշխման և փոխակերպման կանոնների սահմանմամբ: Նշված մենագրություններից առաջինում հեղինակը քննում է ժամանակակից հայերենի հոլովման և խոնարհման համակարգը, խսկ երկրորդ աշխատանքը նվիրված է լեզվական կառուցվածքի ամբողջական նկարագրությանը: Այստեղ, ձևաբանությունից բացի, ներկայացված են հնչաբանությունը, դրաբանությունն ու շարժաբանությունը (որոնք միավորված են արտահայտչաբանության ուսմունքի մեջ), ինչպես նաև շարահյուսությունը: Ձևաբանությունը Գ. Զահուկյանը սահմանում է որպես ուսմունք ոչ միայն ձևերի, այլև «այդ ձևերի անփոփոխակալին իմաստների» մասին: Շարահյուսությունը սահմանվում է որպես բառակապակցությունների, նախադասությունների և նախադասությունների կապակցության մասին ուսմունք: Ձևաբանության բաժնում հեղինակն անդրադառնում է նաև ըստ խոսքի մասերի բառերի դասակարգման, բառի ձևաբանական կառուցվածքի և հիմքակազմության հարցերին: Հետաքրքիր է նշել, որ Զահուկյանը հայագիտության մեջ առաջին անգամ առանձնացնում է դասի և առարկայացման անվանական և տիպի բայական կարգերը: Շարահյուսության բաժնում անվանական և բայական քերականական կարգերի ծավալման հետ կապված քննության են ենթարկվում անվանական և բայական բառակապակցությունների, նախադասությունների և վերջիններիս կապակցությունների կառուցվածքային կազմապարհները: Նախադասությունը համարվում է բայական կարգերի ծավալման վերջնական արշյունը՝ ստորոգման հետ զուգորդված: Բառակապակցությունների և նախադասությունների կառուցվածքային կազմապարհների փոփոխությունները, ինչպես նաև խոսքի մասերի փոխանցումն ու փոխկադապարումը քննվում են առանձին, որպես փոխկադապարման առարկա: Նշված մենագրության մեջ Գ. Զահուկյանը տալիս է ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի մի շարք փաստերի նոր մեկնաբանումներ, վերանայում է խոսքի մասերի համակարգը, հոլովների թիվն ու իմաստային առանձնահատկու-

թյունները, կատարում է հոլովման տիպերի նոր դասակարգում, նորովի լուսաբանում է բայի դիմավոր և անդեմ ձևերը և այլն: Գրված լինելով ավանդական բերականության նվաճումների և ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության քննադատական օգտագործման հիման վրա, այս մեկնագրությունն արժեքավոր է ոչ միայն հայ բերականագիտության առաջ նոր հեռանկարներ բացելու առումով, այլև կարեւոր նշանակություն ունի ընդհանուր լեզվաբանական տեսակետից՝ որպես ընդհանրական լեզվաբանական կազմարի կառուցման փորձ:

Հայերենի համեմատական ֆեռականություն. Հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրությունն սկսվում է XIX դարի II քառորդից: Հ. Պետերմանի «Հայոց լեզվի բերականության» հրատարակումից հետո հայոց լեզվի նյութը մտցվում է գիտական շրջանառության մեջ և մինչև օրս գտնվում է հնդեվրոպականների ուշագրության կենտրոնում: XIX դարի ընթացքում, սակավ բացառություններով (Խ. Արովյան, Ք. Պատկանյան, Լ. Մսերյանց) հայոց լեզվի համեմատական բերականության հարցերով զբաղվել են հիմնականում եվրոպացի գիտնականները, որոնցից կարելի է հիշատակել այնպիսի հայտնի անուններ, ինչպիսիք են Հ. Պետերմանը, Ֆ. Վինդիշմանը, Ռ. Գոշեն, Ֆ. Մյուլլերը, Պ. դը Լազարը, Հ. Հյուբշմանը, Կ. Բրուզմանը, Օստհոֆը, Ս. Բուգզեն, մեր դարում՝ Հ. Պեդերսընը, Ա. Մեյլեն, Է. Լիդենը, Է. Բենվեհիստը, Հ. Ֆոգտը և շատ ուրիշներ: Լեզվաբաններին հետաքրքրել են հայերենի ծագման և պատմական զարգացման հարցերը, նրա տեղը հնդեվրոպական մյուս լեզուների շրջանում, նրա մերձավոր ցեղակցության, հայերի բնօրրանի և այլ հարցեր: Հետազոտողները ձգտում էին պարզել հայերենի և մյուս հ.-ե. լեզուների մերձավորության բնույթն ու աստիճանը, բացահայտել բառապաշարի հնդեվրոպական շերտը և բերականական կառուցվածքի հնդեվրոպական տարրերը, հաստատել լեզվական երևույթների ժամանակագրությունը, որոշել հայերենի նյութի արժեքը հնդեվրոպական լեզվաբանության համար:

Դարասկզբին հայերենի համեմատական քերականությամբ սկսում են ղբաղվել նաև հայ լեզվաբանները, որոնց մեջ հատուկ ծառայություններ ունեն Հ. Տաշյանը և Հ. Աճառյանը: 1920 թ. Վիեննայում լույս է տեսնում Հ. Տաշյանի «Ուսումնական հայերեն լեզվի» աշխատության առաջին մասը, որտեղ հեղինակը շարադրում է հայոց լեզվի նախադրային շրջանի պատմությունը: Գրքի մյուս մասերը չեն հրատարակվել: Հ. Տաշյանը ապրում և ստեղծագործում էր արտաօգնական, մինչդեռ Հ. Աճառյանի գործունեությունը 1920 թ. հետո ամբողջապես կարվում է Սովետական Հաստատանի հետ: Նա սովետահայ լեզվաբանների ավագ սերնդի խոշորագույն ներկայացուցիչն է: Հ. Աճառյանի հայագիտական հետազոտությունների կարևորագույն բնագավառներից մեկն է հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությունը: Այդ բնագավառում իր աշխատանքն սկսելով հայերենի հնչյունական և քերականական կառուցվածքի առանձին հարցերին նվիրված հոդվածներով, Հ. Աճառյանը հետագայում հրատարակում է ֆունդամենտալ աշխատություններ [19, 23, 34], որտեղ ամփոփվում է հայերենի ուսումնասիրության մեջ համեմատաբանների նվաճումների արդյունքները, բնղլայնում է հավաքված նյութը և օժտում է սեփական մեկնաբանություններով:

Լինելով Ա. Մեյերի և Հ. Հյուբշմանի աշակերտը՝ Հ. Աճառյանը սովետահայ հայագիտության մեջ ներկայացնում էր հնգեվրոպաբանության դասական մակարդակը: Լեզուների ծագման և զարգացման, նրանց ծագումնաբանական առնչությունների, հայերենի կաղմավորման, հ.-ե. լեզուների շրջանում նրա գրաված դիրքի հարցերի վերաբերյալ իր հույացքները նա շարադրում է «Հայոց լեզվի պատմություն» աշխատության I հատորում: Հ. Աճառյանը հարում է լեզուների դարդացման հարաշրջական (էվոլյուցիոն) տեսակետին: Նա առանձնացնում է լեզուների: զարգացման երեք հիմնական գործոն՝ 1) «ներքին բարեշրջություն, բնականոն-ներքին զարգացում», 2) արտաքին ազդեցություններ, 3) անհատական նորամոծություններ, որոնք անհամեմատ նվազ դեր են խա-

ղում: Անընդհատ հարաշրջակա՛ն զարգացման զաղարարի հետ են կապվում նաև լեզվական ցեղակցութ՛յան և նախա-
 լեզվի մասին Հ. Աճառյանի ըմբռնումները: Անընդմեջ զար-
 ցացման գործընթացում պատմական տարբեր հանգամանք-
 ների սովորեցութ՛յամբ լեզվի մեջ առաջանում են բարբառներ,
 որոնք աստիճանաբար ավելի ու ավելի հեռանալով միմյան-
 ցից՝ առաջացնում են ցեղակից լեզուներ: Բոլոր հ.-ե. լեզու-
 ները, ըստ Հ. Աճառյանի, նախապես կազմել են մեկ ընդհա-
 նուր լեզու, որով խոսել են հնդեվրոպացիները իրենց նախա-
 հայրենիքում, գրավելով, սակայն, բավական ընդարձակ մի
 տարածություն և բաժանված լինելով համեմատաբար ինքնու-
 բույն ցեղային միավորումների: Հ.-ե. նախալեզվի լրիվ
 վերականգնումը Հ. Աճառյանն անհնար էր համարում և
 գտնում, որ կարելի է խոսել միայն նրա ընդհանուր ա-
 ռանձնահատկությունների վերականգնման մասին: Հայոց
 լեզվի ծագման հարցում նույնպես նա հարում է Հ. Հյուբշմա-
 նի և Ա. Մեյեի տեսակետին, գտնելով, որ հայերենը հ.-ե. լե-
 զուների մի առանձին ինքնուրույն ճյուղ է, և զետեղելով այն
 արիական լեզուների, հունարենի և սլավոնական լեզուների
 միջև: Այնուհետև հեղինակը դիտարկում է հայերենի առանձ-
 նացման ուղիները, զանազան ցեղակից և ոչ ցեղակից լեզու-
 ներից կրած նրա սովորեցությունները, ինչպես նաև բուն հա-
 յերենի լեզվական նյութի հիման վրա փորձում է վերականգ-
 նել նախահայերի հասարակական-քաղաքական կյանքի զար-
 ցացման աստիճանը: Հ. Աճառյանն առաջ է քաշում նախա-
 հայերենի հասկացությունը, գրանով հասկանալով հ.-ե. ընդ-
 հանրությունից նրա անջատվելուց հետո գոյացած լեզվավի-
 ճակը: Լեզվի յուրաքանչյուր վիճակ համարելով բնիկ տարրի-
 րի և փոխառությունների գումար, Հ. Աճառյանը նախ ներ-
 կայացնում է հայերենի հ.-ե. բառաշերտը, այնուհետև տար-
 բեր լեզուներից նրա կատարած փոխառությունները, որոնք
 հայերենի մեջ են թափանցել նրա զարգացման տարբեր ժա-
 մանակաշրջաններում: Այսպիսով, «Հայոց լեզվի պատմու-
 թյունը» հայերենի բառապաշարի ծագումնաբանական և ժա-
 մանակագրական դասակարգումն է: Երկրորդ հատորում

տրվում են հայերենի քերականական կառուցվածքի պատմական փոփոխությունների նկարագրությունը, հայ բարբառներին, միջին հայերենի և նոր հայերենի լեզվական համակարգերի ձևավորման ուղիները, սակայն, բառապաշարի մանրամասն նկարագրության համեմատությամբ, շարադրանքն այստեղ տրվում է միայն ուրվագծի տեսքով: Հայերենի բառապաշարի հարստությունը պատմահամեմատական լուսաբանմամբ ներկայացված է «Հայերենի արմատական բառարանում»: Սա իր տեսակի մեջ եղակի աշխատություն է: Յուրաքանչյուր բառահոգված այստեղ կազմված է հինգ մասից. 1) արմատական բառը, նրա բացատրությունն ու քերականական նկարագրությունը, այդ արմատից կազմված բազադրությունները, հնագույն վկայությունները, 2) ստուգաբանությունը (բառարանի հիմնական մասը), 3) ստուգաբանությունների պատմությունը, 4) բարբառային տարբերակները, 5) այլ լեզուների կողմից հայերեն բառի փոխառությունները: Այդպիսի հաջորդականությամբ նկարագրվում են հայոց լեզվի մոտ 11 հազար արմատներ: Բերված հսկայական նյութը, նրա բազմակողմանի մշակումը, ճշգրիտ մոտեցումը և գիտական հավաստիությունը ապահովում են բառարանի բարձր մակարդակը:

Հայերենի պատմահամեմատական քերականությանը ներվերված աշխատություններում Հ. Աճառյանի ուշագրությունը առանձնապես կենտրոնացած է եղել հայերենի հ.-և. տարրերի հայտնագործման վրա: Հետաքրքիր է նշել, որ Հ. Աճառյանն առաջինն է, որ անդրադառնում է հայերենի փոխհարաբերություններին խեթերենի և ֆոնարերենի հետ:

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության խնդիրները խորապես հետաքրքրում էին նաև սովետահայ հայագետների մի այլ խոշոր ներկայացուցչին՝ Գ. Ղափանցյանին: Սակայն, ի տարբերություն Հ. Աճառյանի, որը հայերենը անվիճելիորեն հնդեվրոպական լեզու էր համարում, նա առաջ էր քաշում հայերենի «ասիանիկ» ծագման վարկածը՝ հենվելով ասիանիկ լեզուների մասին Պ. Կրեչմերի տեսության վրա: Այդ խմբի մեջ Պ. Կրեչմերը միավորում էր հին

Առաջափոր Ասիայի լեզուները, որոնց բնույթը նրա օրոք վերջնականապես դեռ հաստատված չէր: Չժխտելով հայերենի բառապաշարում և քերականական կառուցվածքի մեջ հ.-ե. ուժեղ տարրի առկայությունը և իր հետազոտություններում բացահայտելով հայ-կովկասյան, հայ-խեթական, հայ-խուռի-ուրարտական և այլ բառային ու քերականական զուգաբանությունները, Գ. Ղափանցյանը հանդում է հայերենի խառնածին բնույթի գաղափարին, դրանով իսկ, ինչպես արդեն նշվել է, մերձեցնելով հայերենի երկբնույթ էություն մասին Ն. Մառի վարկածին: Ընդ մին Գ. Ղափանցյանը ժխտում էր խեթերենի և մյուս հին անատոլիական լեզուների հնդեվրոպական բնույթը:

Հաստատելով խեթերենի հետ ունեցած հայերենի ծագումնաբանական կապերը, Գ. Ղափանցյանը բնութագրում է հայերենը որպես ասիանիկ, այսինքն՝ ոչ հնդեվրոպական, կամ, առնվազն, խառնվորված երկբնույթ լեզու: «Հայոց լեզվի ծագման մասին» գրքույկում նա գրում է. «Հայերենը առաջացել է փոքրասիական (Կրեմերի տերմինով՝ ասիանիկ) լեզվական ենթաշերտից, նախապես գոյություն ունենալով խեթական, խուռի-ուրարտական և վրացական էթնիկական ու լեզվական շրջապատում ինչ-որ մի տեղ: Իսկ հայերենի հնդեվրոպական շերտը, որ գերազանցապես առաջացել է թերևս կիմերա-սկյութական, կելտական (գաղատական), արայական (հունական) ներխուժումների հետ կապված, նրա կողմնակի, թեև շատ կարևոր ծագումնաբանական մասն է, որն անշուշտ չի բացառում նաև մյուս հնդեվրոպացիների (արիացիների, փոյուգիացիների և այլոց) ազդեցությունը [21, 39—40]:

Հայ ժողովրդի և նրա լեզվի տեղական՝ «ասիանիկ» ծագման մասին գրույթը Գ. Ղափանցյանը փորձում է հիմնավորել նաև «Հայաստան հայերի օրրան» աշխատության մեջ՝ նույնացնելով հայերենը հայասերենի հետ, իսկ խեթական արձանագրությունների մեջ հիշատակված Հայասա երկիրը համարելով հայերի նախահայրենիքը:

Չնայած հայերի և հայոց լեզվի ծագման մասին ունեցած նրա տեսակետը շքնդունվեց, Գ. Ղափանցյանի աշխատությունները նշանակալից հետաքրքրություն են ներկայացնում: Նրանցում հեղինակը ձգտում է բացահայտել հայերենի բաղմահողմանի կապերը քարթվելական, հին անատոլիական լեզուների, ուրարտերենի, խուրիերենի և Հին Առաջավոր Ասիայի հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական մի շարք այլ լեզուների հետ, փորձում է որոշել հայոց լեզվի հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական բաղադրիչ տարրերի համամասնությունը, առաջիններից մեկը լինելով, տալիս է պալայերենի նկարագրությունը, բերում է շատ հարուստ փաստական նյութ, որը քննադատաբար օգտագործելու դեպքում կարող է լուծել հայերենի համեմատական քերականության շատ կնճռոտ հարցեր: Ուշադրության արժանի են Գ. Ղափանցյանի շափազանց լայն պատմալեզվաբանական հետաքրքրությունները: Հայոց լեզվի պատմության հարցերը նա քննում է հայ ժողովրդի պատմության և մշակույթի լայն ֆոնի վրա՝ ընդգրկելով հին տեղանունների, հայոց պանթեոնի տվյալները և մեծ ուշադրություն դարձնելով հայերի կուլտուրական շփումներին հարևան ժողովուրդների հետ:

Սովետահայ լեզվաբանների ավագ սերնդի այս ներկայացուցիչներից բացի «նոր ուսմունքի» տիրապետության շրջանում հայ լեզվաբանները առանձնահատուկ կերպով չէին պրագմում հայերենի պատմահամեմատական քերականության հարցերով: Այն դեպքերում, երբ նրանք անդրադառնում էին հայոց լեզվի ծագման և բնույթի, հայ ժողովրդի կազմավորման, նրա նախահայրենիքի խնդիրներին, այդ հարցերը լուծում էին Ն. Մառի ստադիալ տեսության դիրքերից՝ հետևելով լեզուների և էթնոսների խաչավորման, լեզվի և նրա բաղադրիչ տարրերի մեջ ժողովրդի էթնոգենեզի գործընթացի ճշգրիտ արտացոլման մասին նրա դրույթներին: Ըստ այդ տեսության հայերենը դիտվում էր որպես «հաբեթական» «կովկասյան» և «պրոմեթեզյան» (հնդեվրոպական) փուլերի (ստադիաների) միջև գտնվող անցումային տիպի լեզու: Այդ տեսակետն էր պաշտպանում, մասնավորապես, Ա. Ղա-

բիրբյանը: Ժխտելով լեզուների ծագումնաբանական ցեղակցությունը, նրանց տարամետ (զիվերգենտ) զարգացման պրոցեսը, Ա. Ղարիբյանը գտնում էր, որ լեզուները ձևավորվում են միայն խաչավորման, բաղմաթիվ ցեղային բարբառների միավորման հետևանքով: Նրա կարծիքով ճիշտ այդպես է առաջացել նաև հայերենը, իսկ նրա կազմի մեջ մտած լեզուները սկիզբ են դրել բնագիտություն էթնիկական լեզվի բարբառների, ընդ որում, իր դրույթների հիմնավորման համար Ա. Ղարիբյանը լեզվական փաստեր չէր բերում, այլ հենվում էր միայն բնագիտություն գաղափարների վրա՝ Ն. Մառի տեսության ոգով:

50-ական թթ. սկիզբը որպես շրջադարձային փուլ է նշանավորվում նաև հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության համար: Հայագետները հանդես են գալիս «նոր ուսմունքի» սխալների բննադատությամբ և պատմահամեմատական լեզվաբանության հիմնական հասկացությունների ու հետազոտական մեթոդների պաշտպանությամբ, վերստին հիմնավորում են հայերենի հնդեվրոպական բնույթը: Այս տեսակետից հիշատակելի են է. Աղայանի «Լեզվաբանությունը Հայաստանում» (ԲՅԱ, 1952, № 5), «Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ» (ԳԱ տեղեկագիր, 1957) հոդվածները, Հ. Ասմանզուլյանի: «Ստուգաբանական հետազոտությունների մեթոդիկայի մասին» թեկնածուական դիսերտացիան և «Հայերենի երկակի բնույթի վարկածի դեմ» (ԲՅԱ, 1953, № 6), «Ցեղակից լեզուների միջև ստուգաբանական կապերի տիպի մասին» (ԸՀԻՄԱ, X, 1956) հոդվածները:

Այդ ժամանակից սկսած հայ համեմատաբանությունը նոր տատանանի է բարձրանում՝ համեմատական-ծագումնաբանական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության վերածնունդի և հնդեվրոպաբանության մեջ տեղի ունեցած որակական տեղաշարժերի հետ կապված: Նոր տեսությունների ու վարկածների առաջադրումն ու տարածումը, լեզվական նոր նյութի հայտնաբերումն ու արդեն հայտնի նյութի նոր մեկնաբանությունները, արդի լեզվաբանության դադափարները լեզվի համակարգայնության, լեզվական մա-

կարգակների ստորակարգութեան, լեզվական կառուցվածքների տարբերակայնութեան (հասարակական, տարածական, պատմական, գործառական և այլն), նախապես միայն համաժամանակյա լեզվաբանութեան մեջ ընդունված՝ հետադետութեան կառուցվածքային ու քանակական մեթոդների կիրառումը նաև տարածամասնակյա քննութեան մեջ զգալիորեն ընդլայնում են պատմահամեմատական ուսումնասիրութեանների հնարավորութեաններն ու բարձրացնում նրանց արդյունավետութեանը:

Հայ համեմատաբանների նոր սերունդը (է. Աղայան, Գ. Զահուկյան, Հ. Ասմանգուլյան, է. Թումանյան, Վ. Քոսյան, Թ. Ղարաբաղյան և ուրիշներ) զբաղվում է ոչ միայն հայերենի քերականական կառուցվածքի ու բառապաշարի ավելի խորացված ուսումնասիրութեամբ, հայ համեմատաբանութեան համար ավանդական՝ ստուգաբանութեան հարցերով, այլև ժամանակակից հնդեվրոպաբանութեան զարգացման նորագույն միտումների հետ կապված հարցերով: Այդ տեսակետից նշանակալից դեր են խաղացել Գ. Զահուկյանի աշխատութեանները: Մի շարք հուլիսիանական ու մենագրութեաններում հեղինակը քննում է հնդեվրոպական, խուրաբարտական և կովկասյան լեզուների փոխհարաբերութեանը՝ բացահայտելով հ.-հ.—ուրարտա-խուրիական դուզարանութեաններ, որոնք վկայում են այդ լեզվաընտանիքների միջև գոյութեան ունեցած հեռավոր ցեղակցութեան մասին: Տեղանունների և անձնանունների համեմատական ուսումնասիրութեան հիման վրա հաստատում է հայասերենի հնդեվրոպական-հին անատոլիական բնույթը, որոշում է նրա դիրքը հ.-հ. լեզուների շրջանում, բնորոշում հայերենի տարածքային փոխհարաբերութեանը Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի հնդեվրոպական հին լեզուների հետ: Առաջին անգամ հայերենի նկատմամբ կիրառում է լեզվաժամանակագրութեան մեթոդը: Առանձնապես հետաքրքրական է Գ. Զահուկյանի վարկածը հայասերենի, որպես հայերենի երկրորդական հնդեվրոպական շերտի մասին: Նրան այդ կարծիքին է հանգեցնում հայերենում զգալի թվով հնդեվրոպական ծագման

բառերի առկայությունը, որոնց հնչյունական կազմում նկատելի են շեղումներ հնչյունական հայտնի օրինաչափ անցումներին:

«Հայերենի նախադրային շրջանի պատմության ակնարկներ» աշխատության մեջ դիտական շրջանառության մեջ եղած սոմբոլը նյութի բնական ուսումնասիրության և համակարգման հիման վրա հեղինակը առանձնացնում է օրինաչափ երևույթները շեղումներից և փորձում է բացահայտել այդ շեղումների բնույթն ու պատճառները: Նրանց համեմատական քննությունը հեղինակին բերում է այն հղրակացության, որ հայերենում առկա է ինչպես հնդեվրոպական, այնպես էլ յուրի-ուրարտական զգալի ենթաշերտը:

Այս գրքում Գ. Զահուկյանը սահմանում է նաև ետնալեզվայինների բմայնացման և բաղաձայն հնչյունների կապակցությունների փոփոխության որոշ օրինաչափություններ, առաջարկում է նոր ստուգաբանություններ, քննում է հայերենի հ.-ն. հնաբանությունները, նախահնդեվրոպական կոկորդայինների արտացոլումը և այլ հարցեր: Ուշադրություն է դարձվում նաև հարաբերական և բացարձակ ժամանակագրությանը և հայերենի նախադրային շրջանի պատմության շրջանառաժամանակը:

Վերջին տասնամյակում հայ համեմատաբանության մեջ նկատվում է հետաքրքրության աճ հայերենի տարածքային կապերի համակողմանի ուսումնասիրության նկատմամբ: Հայերենի և առանձին հ.-ն. լեզուների ու լեզվախմբերի փոխհարաբերության հարցերին նախկինում էլ նվիրվում էին ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հայագետներ: Հասունիկ ուսումնասիրություններ: Հայտնի են Հ. Հյուբշմանի, Ս. Մեյերի, Հ. Պեդերսենի, Գ. Ռ. Զուլտայի Օ. Հաասի, Վ. Պիլզանի, Զ. Բոնֆանտեի, Զ. Գրեպինի, Խ. Կարեաինի, Է. Ա. Մակաևի, Ի. Մ. Դյակոնովի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Գ. Զահուկյանի, Հ. Ասմանզուլյանի, Ն. Մկրտչյանի: և այլոց աշխատությունները՝ նվերված հայերենի կապերի բացահայտմանը գերմանական, սլավոնական, բալթիական, հին անատոլիական լեզուների, ինչպես նաև հունարենի, փոյուգերենի,

սկեւասգերենի, դակերենի և այլ լեզուների հետ: Բացահայտվում են նաև հայերենի ընդհանուր կապերը հ.-և. մյուս լեզուների հետ, որոշվում է նրա դիրքը հ.-և. լեզուների շրջանում [տես 32, 19]:

Ներկայումս հայերենի տարածքային առնչությունների հետազոտությունը տարվում է հիմնականում բառային նյութի ընդգրկման հիման վրա: Հայ-իտալյան զուգաբանությունների բնութիւնն է նվիրված Մ. Աղաբեկյանի աշխատությունը [33], որտեղ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ նշված լեզուների միջև գոյություն են ունեցել տարածքային կապեր հ.-և. միասնության շրջանակներում, երբ իտալյան լեզուներում արդեն նկատվում էր բարբառային տարբերակվածություն: Չնայած դրան, հայերենը շփումների մեջ էր իտալյան լեզուների հետ ամբողջությամբ վերցրած՝ նույն տարածքում և նույն ժամանակաշրջանում: Հ.-և. ընդհանրությունից հայերենի անջատումից հետո իտալյան լեզուները շարունակում էին իրենց շփումները հ.-և. մյուս լեզուների հետ: Հնդկաարիական լեզուների հետ հայերենի փոխհարաբերությունների բնույթը ուսումնասիրվում է Ն. Խաչատուրովայի «Հնագույն հայ-հնդիրանական լեզվական շփումներ» աշխատության մեջ [32]: Հեղինակի կարծիքով հայ-հնդկական բացառյալ զուգաբանությունները հանգում են մշակութային շփումների սլայմաններում հնդկերենից հայերենին անցած փոխառություններին: Հայերենի և սլավոնական լեզուների բաղմակողմանի կապերի բացահայտմամբ զբաղվում է Լ. Սարաջևան:

Շարունակվում է հայերենի հնդեվրոպական բառաշերտի ստանձին խմատաշին խմբերի ուսումնասիրությունը (Հ. Ասմանգուլյան, Լ. Սարաջևա, Մ. Հանեյան): Մ. Հանեյանի աշխատանքը կատարված է հայերենի տարածքային կապերի հաշվառմամբ [32]:

Հայերենի բառապաշարի բնությունը հայ-հնդեվրոպական բառային զուգաբանությունների բացահայտման ուղղությամբ տանելուց բացի, լեզվաբանները հետաքրքրվում են

նաև հնդեվրոպական ծագման բառային միավորների հ.-ե. նախատիպերի կառուցվածքով: է. Թումանյանը իր «Հնդեվրոպական անունների կառուցվածքը հայերենում» մենագրության մեջ քննում է հ.-ե. նախածեղիքի վարդացումը հայերենում, որոշում է հայերեն բառերի հիմքում ընկած հ.-ե. բառակազմական կառուցվածքի կաղապարները: Հայերենի նյութի հիման վրա հ.-ե. բառում ածականի դերի քննության մեջ դրսևորվում է Հ. Սուքիասյանը [32]:

Վերջին տասնամյակի հայ համեմատաբանության մյուս առանձնահատկությունը պետք է համարել հայերենի բարբառների նյութի ընդգրկումը, որը մինչև այդ անբավարար չափով էր քննվում: Բարբառային նյութի համեմատական քննության հիմքը դնում է Հ. Աճառյանը: Իր «Հայերենի նախադրային շրջանի պատմության ակնարկներ» և «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունների մեջ Գ. Զահուկյանը ընդհանրացնում և լրացնում է այդ նյութը, բացահայտելով մի կողմից՝ հին հայերենի մեջ հնագույն բարբառային տարրերակման հետքերը, մյուս կողմից՝ ժամանակակից հայ բարբառների մեջ պահպանված հ.-ե. հնությունները: Հնդեվրոպական ծագման հնչյունական և բառակազմական հնաբանությունների ընդհանրացմանը, ճշգրտմանն ու դասակարգմանն է նվիրված Ն. Սիմոնյանի «Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները» աշխատանքը [32]:

Հայոց լեզվի և նրա բարբառների նյութի օգտագործման նշանակությունը հնդեվրոպական համեմատաբանության համար գնալով աճում է: Այդ մասին են վկայում «Вопросы языкознания» հանդեսի էջերում 1960—62 թթ. ծավալված բանավեճը՝ նվիրված հայերենի բաղաձայնական համակարգի ծագմանը, ինչպես նաև սովետական և արտասահմանյան բաղմաթիվ համեմատաբանների աշխատությունները, որոնք վերաբերում են հայերենի համեմատական քերականության տարրեր հարցերի: Զգալի հետաքրքրություն են ներկայացնում սովետական լեզվաբաններ Ի. Մ. Դյակոնովի, է. Ա. Մակաևի, Վ. Ի. Աբաևի, Տ. Վ. Գամկրելիձեի, Վ. Վ. Իվա-

նովի, Օ. Ս. Շիրոկովի և այլոց աշխատությունները: Մասնավորապես, Գամկրելիձեն, Իվանովը, Շիրոկովը լայնորեն օգտագործում են հայերենի նյութը հ.-ե. նախալեզվի բաղաձայնական համակարգի վերականգնման և իրենց առաջ քաշած այն վարկածի հիմնավորման համար, որի համաձայն հնդեվրոպացիների նախահայրենիքը տեղադրված էր հնդեվրոպական, կովկասյան, սեմական, խուռի-ուրարտական լեզուների հնարավոր շփումների տաբածքում, այսինքն՝ մոտավորապես Կովկասի հարավը, Հյուսիսային Միջագետքը և պատմական Հայաստանն ընդգրկող տարածքում: Հայ լեզվաբաններից այդ կարծիքն է պաշտպանում Ռ. Իշխանյանը:

Հայոց լեզվի պատմություն. Հայոց լեզվի պատմության, հատկապես նրա նախադրային շրջանի զարգացման ուսումնասիրությունը սերտորեն կապված է նրա համեմատական հետազոտության հետ: Ճանաչված հայ համեմատաբանները (Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Է. Աղայան, Գ. Ջահուկյան) միաժամանակ նաև հայոց լեզվի պատմության մասնագետներ են: Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառում հայ լեզվաբանների ավանդի հետ, մասնավորապես հայերենի ծագման, նրա ազդակցական կապերի, տարածքային փոխհարաբերությունների մասին նրանց հայացքների հետ մենք արդեն ծանոթացանք: Այժմ անդրադառնանք լեզվի զարգացման պատմական շրջանի լուսաբանմանը:

Իր զարգացման առաջին շրջանում սովետական հայագիտությունը «նոր ուամունքի» ազդեցությունը կրել է նաև հետազոտության այս բնագավառում: Ինչպես մյուս հարցերում, այնպես էլ այստեղ Ն. Մառի տեսության սկզբունքների հետևորդն էր Ա. Ղարիբյանը: «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ (1937) նա հայերենի զարգացման պատմության մեջ սոցիալ-տնտեսական հասարակարգերի համապատասխան առանձնացնում է չորս շրջան. հին հայերենի՝ որպես հայ ավատականության լեզվի շրջան, միջին հայերենի՝ որպես «միջին փուլի ավատական հասարակության» լեզվի շրջան, աշխարհաբարի՝ որ-

պէս «բուրժուական հասարակութեան լեզվի շրջան», և «սոցիալիզմի էպոխայի գրական լեզվի» շրջան [տես 66, 11, 273]: Ընդունելով Ն. Մառի գրույթները գրաբարի՝ որպէս ֆեոդալական ավազանու և բարբառների՝ որպէս դյուղացիական խռովածքների մասին, նա, իր արտահայտութեամբ ասած, փորձում էր հայերենի զարգացման պատմութիւնը ներկայացնել որպէս լեզուների դասակարգային պայքարի պատմութիւն: Լեզվի մեջ որակական անցումները նա ներկայացնում էր որպէս դասակարգային պայքարի արդշունք, իսկ բարբառների առաջացումը դիտում էր որպէս ստադիալ փոփոխութիւնների հետեանք: Մյուս կողմից, նա բարբառները համարում էր հաշ ժողովրդի կազմավորմանը մասնակցած նախկին ցեղային լեզուների վերապրուկներ: Այստեղից էլ գալիս է նրա պատկերացումը հաջորդ շրջանների համեմատութեամբ գրաբարի ամէլի մեծ բարբառային տարբերակվածութեան մասին: Ավելորդ համարելով «նոր ուսմունքի» տիրապետութեան շրջանում հայոց լեզվի պատմութեան մասին Ա. Ղարիբջանի հայացքների մանրամասն շարադրանքը, նշենք, որ նա հետագայում հրաժարվեց գրանցից:

Հայոց լեզվի պատմութիւնը դիտական լուսաբանութիւն է գտնում Հ. Աճառյանի աշխատութիւններում: Ինչպէս արդէն նշվել է, Հ. Աճառյանը լեզվի զարգացման վերաբերյալ ուներ էվոլյուցիոնիստական հայացքներ, որոնք հատուկ են լեզվական անընդհատականութեան՝ որակական անցումներ շրջանորդ անտութեան համար: Սակայն, հակառակ իր տեսական հայացքների, որոնք նա շարադրում է «լիակատար քերականութեան» ներածական հատորում, Հ. Աճառյանը հայոց լեզվի պատմութեան նկարագրութեան ժամանակ, ելնելով լեզվական կոնկրետ նյութից, հիմնականում ճիշտ է սահմանադատում հայերենի պատմութեան տարբեր շրջանները, բացահայտելով յուրաքանչյուր շրջանի լեզվավիճակի բնորոշ գծերը, սահմանելով գրանք որպէս ինքնուրույն լեզվական համակարգեր:

Թեև Հ. Աճառյանը առանձնահատուկ կերպով չի խոսում լեզվի պատմութեան շրջաբաժանման սկզբունքների մասին,

սակայն շարադրանքի ընթացքում նա առանձնացնում և հատուկ տերմիններով նշանակում է հայերենի զարգացման առանձին փուլերը՝ սկսած հ.-և. ընդհանրությունից նրա անջատվելու ժամանակաշրջանից: Մինչև պատմական Հայաստանի տարածքում հաստատվելն ընկած ժամանակաշրջանը նա անվանում է նախահայերեն, առանց սակայն որոշելու նրա ժամանակագրական սահմանները: Լեզվի գրավոր ամրակայմանը նախորդող շրջանը Հ. Աճառյանն անվանում է «վիպասանական հայերեն» (հայ հին պատմիչների հաղորդմամբ պահպանված այդ ժամանակաշրջանի «վիպասանական» ստեղծագործության հուշարձանների լեզվի հիման վրա): Լեզվի գրավոր պատմությունը նա բաժանում է հին, միջին և նոր հայերենի շրջանների: Հին հայերենի մեջ Հ. Աճառյանն առանձնացնում է «Մեսրոպյան հայերենը» (V դարի առաջին տասնամյակից մինչև 60-ական թթ. ընկած ժամանակաշրջանը, որ նա անվանում է հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի անունով), այնուհետև, «ետմեսրոպյան հայերենը»՝ 460 թ. մինչև XI դ., այսինքն՝ մինչև միջին հայերենի կազմավորման ու գրավոր ամրակայման, ինչպես նաև հայերենի բարբառային տարբերակման սկզբնավորման շրջանը: Ընդ որում, Հ. Աճառյանը գտնում է, որ միջին հայերեն անվանման տակ միավորվում են մի քանի լեզվական տարբերակներ, որոնցից մեկը՝ Կիլիկյան քաղավորության լեզուն, դարձել է գրական լեզու: Միջին և նոր հայերենի միջև ժամանակագրական սահմաններ Հ. Աճառյանը չի հաստատում:

Հ. Աճառյանը ճիշտ է լուսաբանում նաև գրական լեզվի, խոսակցական լեզվի և բարբառների փոխհարաբերությունը: Ըստ նրա մեկնաբանության, հին գրական հայերենը (գրաբարը), հիմք ունենալով իր կազմավորման ժամանակի խոսակցական լեզուն, հետագայում իր նորմաներով մնում է անփոփոխ, իսկ կենդանի խոսակցական լեզուն, որ սկզբնապես նրան նույնական էր, հետագա զարգացման ընթացքում աստիճանաբար հեռանում է նրանից մինչև լիակատար խզում: Ընդունելով լեզվի և այդ լեզուն կրող ժողովրդի պատ-

մության սերտ կապը՝ Հ. Աճառյանը հայ բարբառների ծագումը բացատրում է ինչպես լեզվի զարգացման ներքին գործոնների ազդեցությամբ, այնպես էլ, ավելի մեծ շափերով, հայ ժողովրդի բաղաբական և սոցիալական պատմության փաստերով (պետականության կորուստ, տարածական և վարչական մասնատվածություն, հարածուն գաղթականություն և այլն)։

Հայերենի պատմական զարգացման փաստերի կոնկրետ շարադրանքի մեջ Հ. Աճառյանը հասուկ ուշադրություն է դարձնում բառապաշարի փոփոխություններին և ներկայացնում է ինչպես բնիկ հայկական ծագման բառերի, այնպես էլ լեզվի զարգացման տարբեր շրջաններում կատարված փոխառությունների ընդարձակ ցանկեր։ Ինչ վերաբերում է քերականական կառուցվածքի զարգացմանը, ապա այն, ինչպես արդեն նշել ենք, ներկայացված է միայն ընդհանուր գծերով, թեև Հ. Աճառյանը ճիշտ է նկատում և բնորոշում հայերենի զարգացման յուրաքանչյուր շրջանի հիմնական առանձնահատկությունները։

Մինչև 50-ական թթ. հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունը հիմնականում սահմանափակվում էր նշված աշխատություններով, ինչպես նաև առանձին հեղինակների մի շարք հոգվածներով։

Սովետահայ լեզվաբանության զարգացման երկրորդ շրջանում աճում է հետաքրքրությունը նաև լեզվի պատմության հարցերի նկատմամբ։ Ի հայտ են գալիս բաղմաթիվ աշխատություններ, որոնք ըստ բնույթի կարելի է բաժանել մի քանի խմբի։ Որպես ամբողջական աշխատություն, որն ընդգրկում է հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքը, պետք է հիշել Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմությունը» (1954)։ Հիմնականում ճիշտ արտացոլելով հայոց լեզվի անցած պատմական ուղին՝ նրա զարգացման տարբեր շրջանների բնորոշ գծերի հայտնաբերմամբ, հեղինակը փերջնական լուծում չի տալիս նրա պատմության շրջանաբաժանման հարցին։ Ս. Ղազարյանը հայերենի գրավոր շրջանի պատմությունը բաժանում է զարգացման երեք փու-

լերի, որոնց լեզվավիճակները համապատասխանաբար բնորոշում է. «ընդհանուր հին գրական հայերեն»՝ զրաբար», «միջին հայերեն», «հայոց աղղային լեզու»։ Այսպիսով նա գրական լեզվի պատմությունը չի անջատում լեզվի պատմությունից ընդհանրապես, ինչպես նաև չի պահպանում տերմինների միօրինակությունը։ Սակայն իր ընդհանուր բնույթի երկրորդ աշխատության մեջ՝ «Հայոց գրական լեզվի պատմություն» (հ. 1, 1961), Ս. Ղազարյանն արդեն հստակորեն սահմանադրում է այդ հասկացությունները և նպատակ է դնում ներկայացնելու հայոց լեզվի գրական տարբերակների պատմական նկարագրությունը՝ նրա զարգացման տարբեր շրջաններում։ Գծախտաբար, աշխատանքն անավարտ է մնացել և ընդգրկում է միայն զրաբարի առաջին շրջանի պատմությունը։

Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքի համառոտ շարադրանքը և նրա պատմության շրջանաբաժանումը տրված է Գ. Զահուկյանի «Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը» (1969) աշխատության առաջին մասում, որը հեղինակի «Հայոց լեզվի պերիոդիզացիայի հարցերը» (1956), և «Հայոց լեզվի զարգացման փուլերը» (1964) ավելի վաղ աշխատությունների վերամշակված և լրացված հրատարակությունն է։ Գտնելով, որ հայոց լեզվի իրական պատմությունը պետք է ընդգրկի հայերենի բոլոր տարատեսակությունների պատմությունը, ինչպես նաև շրջանաբաժանման ժամանակ հաշվի առնելով լեզվի համակարգում, գործառության ոլորտներում զարգացման օրինաչափությունների միտումների ուղղվածությունը և գրական մշակման ընթացքում կրած փոփոխությունները, Գ. Զահուկյանը առանձնացնում է հայերենի զարգացման երեք շրջան՝ պայմանականորեն անվանելով դրանք «հին», «միջին» և «նոր», իսկ այդ շրջանների լեզվավիճակները՝ «հին հայերեն», «միջին հայերեն» և «նոր հայերեն»։ Այդ անվանումները արտացոլում են լեզվի հաջորդական անընդմեջ պատմական զարգացման ուղին։

«Գրաբար» տերմինով Գ. Զահուկյանը նշանակում է «հին հայերենի գրական տարբերակը», իսկ «աշխարհաբար» տեր-

մինով անվանում է հայերենի դարդացման նոր շրջանը ամբողջությամբ վերցրած՝ իր բոլոր տարբերակներով հանդերձ։ Գ. Զահուկյանի առաջարկած շրջանաբաժանումը ունի հետևյալ տեսքը. հին շրջանը նա բաժանում է դասական գրաբարի (V դ., հատկապես նրա I կեսը), ետդասական գրաբարի (VI—VII դդ.), նախամիջին (VIII—XI դդ.) ենթաշրջանների, միջին շրջանում առանձնացնում է կիլիկյան նորմավորման (XII—XIV դդ.) և աշխարհաբարացման (XV—XVI դդ.) ենթաշրջանները, նոր շրջանը բաժանում է վաղ աշխարհաբարի (XVII—XVIII դ. II կեսը), երկճյուղ աշխարհաբարի (XVIII դ. II կես—XX դ. առաջին տասնամյակները) և ժամանակակից հայերենի (1920 թ. մինչև օրս) ենթաշրջանների։ Այս շրջանաբաժանումը ներկայումս բնորոշված է գրեթե բոլոր հայագետների կողմից և հայերենի պատմական քննություն հիմքն է կազմում։ Միայն առանձին լեզվաբաններ վիճարկում են դասական գրաբարի ենթաշրջան առանձնացնելու անհրաժեշտությունը (Վ. Առաքելյան), առանձին ենթաշրջանների համար առաջարկում են նոր անվանումներ կամ առանձնացնում են միջանկյալ ենթաշրջաններ (Ռ. Իշխանյան)։

Երկրորդ խումբը կազմում են այն աշխատությունները, որոնք նվիրված են լեզվական կառուցվածքի առանձին մակարդակների, ինչպես նաև որոշ քերականական կարգերի կամ խոսքի մասերի պատմական դարձացման քննությանը։

Դրանց մեջ ամենից աղեկի արժեքավոր են Ա. Աբրահամյանի, Հ. Պետրոսյանի, է. Քումանյանի աշխատությունները։ Ա. Աբրահամյանի «Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» մենագրությունը (1953) գերբայների հանգամանակից վերլուծությունն է. այստեղ դիտարկվում է նրանց զարգացումը հայերենի բոլոր տարատեսակություններում (գրաբար, միջին հայերեն, նոր հայերենի գրական տարբերակներ, բարբառներ), որոշվում է նրանց միջարք տեսակների ծագման ժամանակը, բացահայտվում են նրանց հնագույն վկայությունները և այլն։ Հեղինակը շարադրում է նաև նրանց ուսումնասիրության և գնահատման պատմությունը հայ քերականության մեջ՝ սկսած V դարից

մինչև օրս: Հիշատակության արժանի է նաև Հ. Կուսիկյանի «Очерки исторического синтаксиса литературного армянского языка» (1959) աշխատությունը, որպես հայերենի շարահյուսական կառուցվածքի պատմական քննության (սկսած «վիպասանական հայերենի» շրջանից մինչև օրս) առաջին և զեռեա միակ փորձ: Հեղինակը դալիս է այն եզրակացության, որ սկսած հայերենի գրի առնվելու պահից և նույնիսկ ավելի վաղ շրջանից, որի լեզվավիճակը կարելի է վերականգնել բանավոր բանաստեղծության պահպանված հատվածների հիման վրա, հայերենի շարահյուսական կառուցվածքը պարզունակ չէր: Շարահյուսական հարաբերությունների արտահայտությունը համադրական բնույթ ունեւր, որ ճշտորեն համապատասխանում էր հոլովման և խոնարհման համակարգերի թերական բնույթին: Հեղինակը գտնում է, որ պարզ նախադասության շարահյուսական կառուցվածքի հիմնական հատկանիշները առանց մեծ փոփոխությունների պահպանվել են հայերենի զարգացման շրջաններում:

Հիմնական փոփոխությունները տեղի են ունեցել շարահյուսական կապերի արտահայտման եղանակների մեջ, մասնավորապես հոլովական խնդրառությունում:

է. Թումանյանը առանձին մենագրություն է նվիրել նոր գրական հայերենի հոլովական ձևերի պատմական զարգացման նկարագրությանը (1962), որտեղ, նախքան իր ուսումնասիրության առարկային անցնելը, ներկայացնում է գրաբարի հոլովման համակարգը, առկա է միջին հայերենի հոլովման մի շարք առանձնահատկությունների համառոտ բնութագիրը, նշում է գրաբարի համեմատությամբ միջին հայերենում տեղի ունեցած փոփոխությունները և բացահայտում է ժամանակակից հայերենի հոլովական ձևերի ծագման ակունքները: Նույնպիսի հարցի էր նվիրված նաև Վ. Ավթանդիլյանի «Գոյականների հոլովման պատմական զարգացումը հայերենում» թեկնածուական գիտերտացիան:

Իր մի այլ մենագրության մեջ («Артикли в современном армянском языке», 1963) է. Թումանյանը դարձյալ

անդրադառնում է նկարագրվող լեզվական փաստերի պատմությանը և քննում է նրանց զրուեցումն ու արտահայտած բերականական իմաստները գրաբարում և միջին հայերենում:

Գոյականի հետ կապված մի շարք բերականական կարգեր պատմական հայեցակետով քննվում են Հ. Պետրոսյանի երկու մենագրություններում՝ «Գոյականի առումները հայերենում» (1960) և «Գոյականի թվի կարգը հայերենում» (1972):

Նշված բնագավառում ձևաբանական արդյունքների ամփոփումն է լեզվի ինստիտուտի կոլեկտիվ աշխատանքը՝ «Հայերենի պատմական բերականությունը» (1975, հ. 2): Հրատարակված հատորը ընդգրկում է բառակազմության և բայական համակարգի պատմական զարգացման քննությունը: Ավարտված են և շուտով կհրատարակվեն նաև հնչյունական համակարգի և հոլովման համակարգի պատմական նկարագրությունները:

Երրորդ խումբն Պն կազմում այն աշխատությունները, որոնք նվիրված են հայերենի զարգացման առանձին շրջանների ուսումնասիրությանը: Եթե դրաբարին վերաբերող աշխատություններում հիմնականում տրվում է նրա բերականական կառուցվածքի կամ նրա առանձին կոլմերի համաժամանակյա ստատիկ նկարագրությունը, ընդ որում, որպես կանոն հիմք է վերցվում գասական հայերենի լեզվավիճակը, ապա միջին հայերենը, և հատկապես նոր հայերենը ներկայացվում են իրենց կազմավորման և պատմական զարգացման ընթացքում:

Գրաբարին նվիրված ամենահայտնի աշխատություններն են Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձևաբանությունը», որ ունեցել է մի շարք հրատարակություններ, է. Թումանյանի «Древнеармянский язык» (1971) մենագրությունը, որը ներկայացնում է գրաբարի համակարգի գիտական նկարագրությունը, ինչպես նաև է. Աղայանի «Գրաբարի բերականությունը» (1964), որը գրաբարի առաջին նկարագրությունն է կառուցվածքային լեզվաբանության սկզբունքներով ու տերմիններով: Գրաբարի տիպաբանական բնութագրին է նվիրված Ա. Սար-

զբաշանի «Գրաբարի տիպարանություն» աշխատությունը [18]:

Մի բանի աշխատանք նվիրված է գրաբարի բերականական կառուցվածքի առանձին հատվածներին, հատկապես նրա շարահյուսական կառուցվածքի բնորոշ առանձնահատկությունների բացահայտմանը: Ունենք նաև գրաբարին նվիրված մի ամբողջ շարք ուսումնական ձեռնարկներ և քրեստոմատիաներ բարձրագույն ուսումնական հաստատությունների հոմանիստ բաժինների համար:

Միջին հայերենի հարցերը մինչև վերջին ժամանակներս քիչ էին գրավում հայագետների ուշադրությունը, հրապարակի վրա էր միայն Ս. Ղալաբյանի «Միջին հայերեն» (1960, հ. 1), աշխատությունը, որը դժբախտաբար անավարտ մնաց (պարունակում է միայն հնչյունական համակարգի նկարագրությունը): 1972—75 թթ. լույս տեսավ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի կողմից աշխատությունը «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», որն քնդգրկում է միջին գրական հայերենի բերականական կառուցվածքը զրեթե ամբողջությամբ (հնչյունական համակարգը, բառապաշարը, հոլովումն ու խոնարհումը, շթերվող խոսքի մասերը, պարզ և բարդ նախադասության շարահյուսությունը): Աշխատանքը դիտական շրջանառության մեջ է դնում լեզվական հարուստ նյութ, ներկայացնելով նկարագրվող շրջանի բնորոշ առանձնահատկությունները և անկասկած կնպաստի միջին հայերենի պատմության վիճելի խնդիրների՝ մասնավորապես նրա բարբառային մասնատվածության, գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության, գրական լեզվի բարբառային հիմքի, նրա դորժառության ոլորտների և առանձնահատկությունների հարցերի լուծմանը:

Միջին հայերենի բարբառային տարբերակվածության պատկերի վերականգնման և տարբեր բարբառների հիմքի վրա նրա գրական մշակման հնարավորությունների պորբլեմով է զբաղվում Մ. Մուրադյանը:

Զգալի դժվարություն է ներկայացնում ժամանակակից հայերենի ձևավորման և պատմության նկարագրությունը,

քանի որ այն ղարդանում էր բարբառային խիստ տարբերակվածությամբ, հին և նոր գրական լեզուների ղուգահեռ գործածությամբ, իր իսկ նոր հայերենի՝ արևմտյան և արևելյան ճյուղերի երկփեղկվածությամբ, ինչպես նաև հայ հասարակության տարբեր խավերի մեջ սոցիալ քաղաքական շարժումների բարդ պատկերի առկայության պայմաններում: Սակայն սովետական լեզվաբանները (Գ. Սևակ, Գ. Զահուկյան, Ս. Ղազարյան, Հ. Կուսիկյան, Ռ. Իշխանյան, Է. Թումանյան, Ս. Գալստյան, Վ. Աճեմյան և ուրիշներ) զգալի աշխատանք են կատարել աշխարհաբարի ղարդացման փուլերի ժամանակագրական սահմանների և բնորոշ առանձնահատկությունների բացահայտման, գրական տարբերակների բարբառային հիմքի որոշման, նրանց մշակման հիմնական միտումների, գրապայքարի բնույթի ու նպատակների բնութագրման, ինչպես նաև ժամանակակից արևելահայերենի, այդ թվում նրա արդի փուլի ղարդացման ու գործառության բազմաթիվ մասնակի խնդիրների լուծման ուղղությամբ:

Արևմտահայ գրական լեզվի ձևավորման և սկզբնական շրջանի պատմությանն են նվիրված Տ. Շահբազյանի «Արևմտահայ աշխարհաբարի ծագումը», (1963) և Վ. Աճեմյանի «Արևմտահայ գրական լեզվի կազմավորումը», (1971), մենագրությունները:

Այսպիսով, հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնադավառում ձեռք են բերված նշանակալից արդյունքներ, հավաքված է փաստական հարուստ նյութ, մշակված է գիտական շրջանաբաժանումը: Որոշակի աշխատանք է կատարված նաև պատմական լեզվաբանության տեսական սկզբունքների և հետազոտական մեթոդների մշակման ուղղությամբ: Այդ ամենը արդիական է դարձնում հայոց լեզվի ծագման պահից մինչև մեր օրերը նրա ամբողջական պատմության ստեղծման գործը: Լեզվի ինստիտուտում կազմված են «Հայոց լեզվի պատմություն» քառահատոր աշխատության ընդարձակ ծրագիրն ու սկզբունքները: Նախագիծը կազմված է լեզվի տարածմանակյա քննության հետ կապված խնդիրների, ամենալայն ընդգրկման սկզբունքի համա-

ձայն: Այդպիսի մի ուսումնասիրություն իրենից պետք է ներկայացնի հայոց լեզվի պատմությունը՝ ներառյալ նրա բոլոր տարածական, հասարակական գործառական տարբերակների ամբողջությունը, նրանց առանձնահատկությունների, փոխհարաբերությունների, զարգացման միատմաների և գործառության նկարագրությունը լեզվի զարգացման ամբողջ ընթացքում:

Հայ բարբառագիտություն. Հայ բարբառների մասին առաջին տեղեկությունները և նրանց առանձին բնորոշ գծերի բացահայտման փորձերը մեզ են հասել հայ բերականների առաջին խսկ աշխատություններից: Սակայն հայ բարբառագիտությունը որպես առանձին լեզվաբանական գիտակարգ ձևավորվում է միայն XIX դ. II կեսից: Այդ շրջանում հիմք է դրվում առանձին բարբառային միավորների գիտական նկարագրության: Ուսումնասիրողներին հետաքրքրում են նաև հայ բարբառների ծագման, գրական լեզվի հետ ունեցած հարաբերության, գրաբարի, ինչպես նաև հայոց լեզվի պատմության ավելի վաղ շրջանում նրանց գոյության, նույնիսկ հ.-ն. նախալեզվի հետ նրանց կապերի բացահայտման հարցերը: Այդ ժամանակաշրջանին են վերաբերում նաև հայ բարբառների դասակարգման առաջին փորձերը՝ հիմնականում տարածական սկզբունքով, թեև որոշ հետազոտողներ նշում են նաև առանձին ձևաբանական և հնչյունական հատկանիշներ: XX դարի սկզբում լույս են տեսնում Հ. Աճառյանի առաջին ^S բարբառագիտական աշխատությունները (*Classification de dialectes arméniens*, Paris, 1909, Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911), որոնց մեջ հեղինակը առաջ է քաշում բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքը: Ըստ սահմանական ներկայի կազմության ձևերի Հ. Աճառյանը առանձնացնում է հայ բարբառների երեք հիմնական խումբ և անվանում է դրանք նշված բայաձևերի ձևաբանական ցուցիչների համաձայն՝ կր, ում, ել: Բարբառների դասակարգման ժամանակ Հ. Աճառյանը թեև հաշվի է առնում նաև տարածական հատկանիշը, սակայն նրան երկրորդական տեղ է հատկացնում և օգտագործում է այն բարբառների նախ-

կին աշխարհագրական փոխտեղադրությունը բացահայտելու համար:

Իր աշխատություններում Հ. Աճառյանը պարզում է բազմաթիվ բարբառային միավորների բարբառային դիրքը, ինչպես նաև տալիս է առանձին կարևորագույն բարբառների մեկնադրական նկարագրությունը: Բարբառների նկարագրության ժամանակ նա առաջնորդվում է պատմահամեմատական լեզվաբանության սկզբունքներով: Բարբառները համարելով սկզբնապես միասնական լեզվի (տվյալ դեպքում հին հայերենի) հետագա ճյուղավորումները, նա կառուցում է նրանց նկարագրությունը՝ դրաբարից ունեցած նրանց տարբերությունների բացահայտման միտումով: Հատկապես այդ վերաբերում է բարբառների հնչյունական համակարգի, մասամբ բառապաշարի նկարագրությանը: Ինչ վերաբերում է ձևաբանությանը, ապա դրաբարից ունեցած մեծ տարբերությունների, առանձին դեպքերում ձևաբանական համակարգի լիակատար վերակազմավորման պատճառով Հ. Աճառյանը համեմատության եղբ է ընտրում ժամանակակից հայերենը: Բարբառների ուսումնասիրության այս մեթոդը Հ. Աճառյանը հետևողականորեն կիրառում է առանձին (10-ից ավելի) բարբառների բնությունը նվիրված բոլոր մենագրություններում: Հ. Աճառյանի բարբառագիտական հայացքներն ու հետազոտական մեթոդները նշանակալից ազդեցություն թողեցին բարբառագետների հետագա սերնդի վրա: Գրեթե մինչև վերջին տասնամյակը ուսումնասիրողները հետևում էին բարբառների նկարագրության նրա սխեմային: Հ. Աճառյանի ձևաբանական դասակարգումը նույնպես ընդունվում և զարգացվում է հետագա մանրամասնման ուղղությամբ: Ա. Ղարիբյանը հայտնաբերում է նոր բարբառային միավորներ և բաժանում է դրանք ս, կա, հա, ինչպես նաև դրաբարատիպ ձևաբանական խմբերի մեջ: Հետագայում նա մշակում է տիպաբանական դասակարգում և բաժանում է հայ բարբառները բարբառային 7 ճյուղ ընդգրկող 3 խմբի, որոնք ներկա ժամանակը կազմում են. ա) դերբայների օգնությամբ (ռւմ, ս, լ, ճյուղերի բարբառները), բ) մասնիկնե-

րի օգնությամբ (կր, կա, հա ճյուղերը) և դ) գրաբարատիպ, որի մեջ մտնում է մեկ ճյուղ:

Ա. Ղարիբջանից անկախ համանման տիպաբանական դասակարգում է առաջարկում նաև է. Աղայանը: Նա առանձնացնում է բարբառների երկու ճյուղ, որոնք ներկա ժամանակը կազմում են՝ 1) դերբայների օգնությամբ, 2) գրաբարատիպ-մասնիկավոր եղանակով: Առաջին ճյուղը է. Աղայանը բաժանում է ում, ել, և խմբերի, խսկ երկրորդը՝ կր, կա, հա:

Ի տարբերություն Ա. Ղարիբջանի և է. Աղայանի, Գ. Զա-հուկյանը առաջ է քաշում այսպես կոչված պատմաձևաբանական դասակարգում, որը հաշվի է առնում նշված ձևաբանական ցուցիչների ծագումը (նախնական ձևեր): Այսպես, ի, և ճյուղերը միավորվում են լիս խմբի մեջ, կր-ն հանգեցվում է կու ձևին և այլն: Առանձնացնելով երկու ձևաբանական տիպաբանական խումբ՝ նա, է. Աղայանի նման, միավորում է Ա. Ղարիբջանի առանձնացրած երկու խմբերը: Գ. Զահուկյանը նշում է նաև, որ դրանք պատմականորեն համընկնում են արնմտյան և արևելյան բարբառախմբերի հետ, որոնք առանձնացվում էին ավանդական պատմատարածական սկզբունքով:

Ձևաբանական դասակարգումից բացի Ա. Ղարիբջանը փորձում է տալ նաև բարբառների հնչյունաբանական դասակարգումը, հենվելով դրաբարի համակարգի համեմատությամբ բարբառների պայթական ու կիսաշփական բաղաձայնների կրած փոփոխությունների վրա: Այդ փոփոխությունների արդյունքներից, այսինքն բարբառների բաղաձայնական համակարգից ելնելով՝ Ա. Ղարիբջանն առանձնացնում է հայ բարբառների չորս խումբ. ա) առաջին տեղաշարժի ենթարկված (գրաբարի ձայնեղների դիմաց խուլեր ունեցող), բ) երկրորդ տեղաշարժի ենթարկված (գրաբարի որոշ ձայնեղների դիմաց շնչեղ ձայնեղներ ունեցող), գ) տեղաշարժ-տեղափոխության ենթարկված (գրաբարի ձայնեղների դիմաց խուլեր և խուլերի դիմաց ձայնեղներ ունեցող և դ) գրաբարի պայթական և կիսաշփական բաղաձայնների համակարգը պահ-

պահած բարբառներ: Հետադայում, մշակելով և զարգացնելով իր դասակարգումը, Ա. Ղարիբյանը հանդում է հայ բարբառների բաղաձայնական համակարգը անմիջականորեն հնդեվրոպական համակարգի հետ համեմատելու մտքին՝ հայ բարբառների ծագման ժամանակադրական հաջորդականությունը բացահայտելու նպատակով: Ավելի մանրամասն իր գրույթները շարադրում է «Консонантизм смычных армянского языка» հոդվածում (ВЯ, 1959, № 5, էջ 82—99): Հնդեվրոպական նախալեզվի համար կանխադրելով բաղաձայնների քառաշարք համակարգ (b, bh, p, ph), Ա. Ղարիբյանը ամենավաղ ծագում է վերագրում այն հայերեն բարբառներին, որոնք ունեն հ.-հ. նախալեզվին ամենից ավելի մոտ բաղաձայնական համակարգ: Ըստ այդմ, նա ուրվագծում է բարբառների բաղաձայնական համակարգերի ծագման հետևյալ հաջորդականությունը. I խումբ՝ եռաշարք խլադուրկ համակարգ (b, bh, ph), II խումբ՝ քառաշարք համակարգ (b, bh, p, ph), III խումբ՝ երկշարք խլադուրկ համակարգ (bh, ph), IV խումբ՝ միջին հայերենի բաղաձայնական համակարգը (p, b, ph), V խումբ՝ երկշարք խլադուրկ համակարգ (b, ph), VI խումբ՝ զրաբարի բաղաձայնական համակարգը (b, p, ph) և VII խումբ՝ երկշարք ձայնալուրկ համակարգ (p, ph) [հմմտ. 66, II, 37]:

Միաժամանակ նա նշում է առանձնացված խմբերի աշխարհագրական տեղաբաշխումը և գալիս է այն եզրակացություն, որ հ.-հ. բաղաձայնական համակարգի տեղաշարժը արտացոլում է հայկական ցեղերի առաջխաղացումը արևմուտքից արևելք, իսկ հայ բարբառները՝ հնչյունաբանական զտասկարգումը արտացոլում է հայոց լեզվի տարածումը պատմական Հայաստանի տարածքում: Այս տեսակետն անընդունելի համարվեց և քննադատվեց ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակի հարցերում: Սակայն Ա. Ղարիբյանի հոդվածը «Вопросы языкознания» հանդեսի էջերում առաջ բերեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին ինչպես հայ լեզվաբանները (է. Աղայան, Գ. Զահուկյան), այնպես էլ սովետական և արտասահմանյան

նշանավոր հայագետներ (Վ. Մ. Ժիրսեանսկին, է. Ա. Մակակր, Վ. Վ. Իվանովը, է. Բենիմենիտսը, Վ. Պիզանին, Գ. Ֆոգտը, Ու. Ֆ. Ասմանը, Ժ. Ֆուրկեն, Ֆ. Ֆեյդին, Վ. Մ. Գեորգիևը, Զ. Լ. Զաբրոցկին, Յան Օտրեմբսկին)։

«О генезисе армянского консонантизма» հոդվածում է. Աղայանը, առարկելով գրաբարի համեմատությամբ հայերենի բարբառների բաղաձայնական համակարգի նախնականության և բարբառների բաղաձայնական համակարգերում հայկական ցեղերի՝ արևմուտքից արևելք առաջխաղացման մասին Ա. Ղարիբյանի դրույթներին, գտնում է, որ գրանք ապացուցելու համար «պետք է կանգ առնել ոչ միայն բաղաձայնական, այլև ձայնավորական համակարգի վրա։ Իսկ հայ բարբառների ձայնավորական համակարգը ծագել է հին հայերենի ձայնավորների համակարգից (ընդգծումը հեղինակինն է—Լ. Հ.)։ Այս դրույթը հաստատված է հատկապես Հ. Հ. Աճառյանի ուսումնասիրություններով, և ոչ որ (այդ թվում և Ա. Ս. Ղարիբյանը), չի ժխտում այդ» [ԲՂ, 1960, № 5, էջ 50]։ Այնուհետև, է. Աղայանը բերում է հայ բարբառների համար համընդհանուր մի շարք հնչյունական անցումներ, որոնք դալիս են գրաբարյան ձևերից ($l > q$, $au > o$, $i > h$ և այլն)։

Հայ բարբառների ծագման հարցի պարզաբանման համար հեղինակը ընդգծում է նաև ձևաբանական դասակարգման սովորների հաշվառման կարևորությունը։ է. Աղայանը պաշտպանում է այն կարծիքը, որի համաձայն «ժամանակակից հայ բարբառները ծագում են հին հայերենի համակարգից» (նույն տեղում)։

«К вопросу о происхождении консонантизма армянских диалектов» հոդվածում Գ. Զահուկյանը նույնպես ցույց է տալիս Ա. Ղարիբյանի դրույթների անհամոզիչ լինելը և հանդում է այն հետևությունը, որ «հայ բարբառների պատմությունը հայոց լեզվի պատմության անբաժանելի մասն է կազմում» [ԲՂ, 1960, № 6, էջ 46]։ Ըստ այդմ, նա առանձնացնում է հին հայերեն ($V—XI$ դդ.), միջին հայերեն ($XII—XVI$ դդ.) և նոր հայերեն ($XVII—XX$ դդ.) բարբառներ, միա-

ժամանակ նշելով, որ դրանք միմյանց անմիջական հետևողական շարունակությունը չեն կազմում, այլ զարգացել են առանձին կերպով՝ յուրաքանչյուր համապատասխան շրջանում:

Այնուհետև Գ. Զահուկյանը նկատում է, որ հին հայերենի շրջանի նախնական փուլում բարբառային տարբերակումը ավելի թույլ էր արտահայտված, քան հետագա շրջանում: Այդ ժամանակ դրանք հիմնականում հնչյունական և բառապաշարային էին, իսկ հետագայում խորանում է նաև ձևաբանական տարբերակվածությունը:

Վերջում հեղինակը նշում է, որ «բարբառների տարբերությունների մասին չի կարելի դատել՝ կենելով միայն բաղաձայնական համակարգից... Հայ բարբառները բնութագրվում են զուգաբանությունների ավելի մեծ քանակով և միայն նրանց բաղաձայնականի ուսումնասիրությունը կարող է բերել ճիշտ եզրակացությունների» (նույն տեղում, էջ 49):

«Вопросы языкознания» հանդեսի էջերում ծավալված բանավեճը հայ բարբառների բաղաձայնական համակարգի մասին, ինչպես նաև դրան նախորդած մտքերի աշխույժ փոխանակությունը «Պատմաբանասիրական հանդեսում» հայ բարբառների ծագման մասին ավելի լայն առումով՝ նշանակալից դեր խաղացին հայ բարբառագիտության առաջ կանգնած պրոբլեմների ու խնդիրների ճշգրտման հարցում: Մասնավորապես բանավեճի մասնակիցներն ընդգծում էին, որ անհրաժեշտ է ձեռնարկել հայերենի բաղաձայնների փորձառական հնչյունաբանական ուսումնասիրությունը, նկարագրել առանձին բարբառների հնչույթային համակարգը՝ նշելով յուրաքանչյուր հնչույթի և նրա տարբերակների տեղը տվյալ բարբառի համակարգում, ավելի մանրամասն ուսումնասիրել դրաբարը՝ նրա համակարգում բարբառային հիմք ունեցող տարբերակների հայտնադորձման նպատակով, ուսումնասիրել բարբառների փոխառությունները՝ որոշ հնչյունական օրինաչափությունների բացարձակ և հարաբերական ժամանակագրությունը պարզելու համար և այլն: Վերջապես, նըշ-

վում էր հայերենի բնդարձակ բարբառագիտական ատլասի ստեղծման հրատապությունը, որի իրականացումը անհրաժեշտ նախադրյալ կհանդիսանար «հայ ժողովրդի գրաված տարածքում նրա բնակեցման պատմաաշխարհագրական փաստերի հետ կապված՝ առանձին լեզվական երևույթների հաստատված զուգաբանությունների վերլուծության համար» (Վ. Մ. Փիրմունսկի, «Некоторые итоги дискуссии об армянском консонантизме», ВЯ, 1962, №5, էջ 46): Միաժամանակ կարող էին լուծվել պատմական բարբառագիտության վիճելի շատ հարցեր, մասնավորապես հայերենի բարբառների ծագման հարցը:

1972 թ. լույս տեսավ Գ. Զահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը, որը, մի կողմից, հանրագումարի էր բերում հայ բարբառագիտության նվաճումները, մյուս կողմից, նշում էր նրա հետագա զարգացման ուղիները:

Այս մենագրության մեջ հեղինակը քննում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ պատմական բարբառագիտության հարցերը: Համաժամանակյա բարբառագիտության բնագավառում հեղինակի հիմնական խնդիրն է ժամանակակից հայ բարբառների դասակարգումը հատկանիշների մի ամբողջ խմբի հիման վրա՝ ի տարբերություն նախորդ դասակարգումների, որոնք հաշվի էին առնում միայն մեկ՝ ձևաբանական կամ հնչյունական հատկանիշ: Բարբառների բաղմահատկանիշ դասակարգումը հենվում է լեզվաբանական աշխարհագրության այն դրույթի վրա, որի համաձայն առանձին բարբառային միավորների միջև խիստ անջրպետներ չկան, և զուգաբանությունների ցանցի խտությամբ որոշվող կենտրոնների միջև գոյություն ունեն անցումային գոտիներ: Այդ նշանակում է, որ բարբառների իրական փոխհարաբերությունը և բարբառային միավորների ճիշտ դասակարգումը հնարավոր է միայն մի շարք էական տարբերակիչ հատկանիշների հաշվառումով: Որպես դասակարգման հիմք Գ. Զահուկյանն քննարկում է 100 հատկանիշ (զուգաբանություն), որոնք այնպես են խմբավորված, որ համամասնորեն արտա-

ցուում են լեզվական համակարգի տարբեր կողմերը (50 հնչյունական հատկանիշից 25-ը վերաբերում է բաղաձայնական, 25-ը՝ ձայնավորական համակարգին, իսկ ձևաբանական հատկանիշները նույնպես հավասարաչափ բաշխված են անվանական և բայական համակարգերի միջև): Այդ հատկանիշները տեղայնացված են ըստ պատմական Հայաստանի և հայկական գաղթօջախների 120 բարբառախոս վայրերի:

Տվյալ բնակավայրում բարբառային հատկանիշի առկայության/բացակայության մասին սովյալների վիճակագրական մշակումից հետո հեղինակն անցնում է բուն դասակարգմանը, առանձնացնելով բարբառային միավորների երեք ստորակարգային մակարդակ՝ բարբառախումբ, բարբառ, խոսվածք: Մեկ խոսվածքի մեջ մտնում են 0,5-ից մինչև 22, մեկ բարբառի մեջ 22,5-ից մինչև 44, իսկ բարբառախմբի մեջ 44,5-ից մինչև 66,5, այսինքն՝ հատկանիշների առավելագույն քանակով տարբերակվող միավորները: Ըստ այդմ, 120 բնակավայրերը, որոնք հավասարեցում են խոսվածքներին, միավորվում են 44 բարբառի մեջ, որոնք էլ իրենց հերթին խմբավորվում են 11 բարբառախմբի մեջ: Բացի այդ, հեղինակը պատմականորեն առանձնացնում է նաև երկու մեծ՝ արևելյան և արևմտյան խմբակցություն, որոնք համապատասխանաբար ընդգրկում են 48 և 72 խոսվածք: Այսպիսով, հեղինակը հայերենի յուրաքանչյուր տարածական տարբերակի տեղի որոշման համար տալիս է քանակական չափանիշներ, ընդ որում ոչ միայն նշված 120 խոսվածքների, այլև հետագայում հայտնաբերվելիք բոլոր հնարավոր միավորների համար:

Պատմական բարբառագիտության պրոբլեմների մեջ, որոնք քննվում են աշխատության երկրորդ մասում, ամենակարևորներն են V դարում բարբառային իրավիճակի, հայերենի զարգացման տարբեր շրջաններում զրական լեզվի և բարբառների, ժամանակակից հայ բարբառների միջև ժամանակագրական հարաբերությունների, զրաբարում բարբառային հնագույն տարբերակների հետքերի և ժամանակակից բարբառներում հնչյունական, քերականական և բառային

հնաբանությունների հայտնաբերման հարցերը: Առանձնապես հետաքրքիր է V դարի համար ընտրված 40 բարբառային հատկանիշների հիման վրա այդ ժամանակաշրջանում բարբառային միավորների բաղմահատկանիշ գոտակարգումը տալու փորձը: Ուշագրություն արժանի է նաև հայ բարբառների նյութի նկատմամբ լեզվաժամանակադրական մեթոդի կիրառման փորձը՝ հայերենի բարբառային մասնատման ժամանակը որոշելու նպատակով:

Վերջին ժամանակներս ավելի է աճում հետաքրքրությունը պատմական բարբառագիտության հարցերի նկատմամբ: Մի շարք հոդվածներում Գ. Զահուկյանը, է. Աղայանը, Հ. Մուրադյանը, Մ. Մուրադյանը, Լ. Հովսեփյանը, Ա. Հանեյանը քննում են բարբառների ծագման, զրական և բարբառային տարբերակների փոխհարաբերության, հին և միջին հայերենի շրջանում բարբառային տարբերակվածության, բարբառային երևույթների ժամանակադրության և այլ հարցեր: Բարբառագիտական ուսումնասիրությունների բնագավառում ամենանշանակալից ձեռնարկումը պետք է համարել հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծումը: Հայոց լեզվի վարդաքանցման արդի փուլում բարբառային իրադրությունը չափազանց բարդ և յուրահատուկ բնույթ ունի, ոչ միայն լեզվի ուժեղ բարբառային տարբերակվածության պատճառով, այլև բարբառների կրողների պատմական ճակատագրի հետ կապված: Ինչպես հայտնի է, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանության և զանգվածային տեղահանությունների հետևանքով արևմտահայ բարբառների մեծ մասը կորցրեց իր տարածական հիմքը և պահպանվեց միայն աշխարհով մեկ ցրված առանձին բարբառախոսների բերանում: Ուժեղացել է միջբարբառային փոխներթափանցումների, բարբառների խառնրման, իսկ Սովետական Հայաստանի տարածքում նաև նրանց անհետացման պրոցեսը, որ հետևանք է զրական լեզվի հարաճուն ազդեցության: Ուստի հասկանալի է, թե ինչ կարևոր և անհետաձգելի խնդիրներ են կանգնած ատլասի կազմողների առջև: Աշխատանքների առաջին փուլն էր նյութ-

Թերի հավաքման ծրագրի կազմումը [57], որի նպատակն էր մի կողմից՝ նախապես որոշել այն անհրաժեշտ հատկանիշները, որոնք պետք է ընկած լինեն ապագա քարտեզների հիմքում, մյուս կողմից՝ ապահովել անհրաժեշտ նյութի հավաքումը: Ծրագիրն ընդգրկում է մոտ 800 բառային, բերականական և հնչյունական հատկանիշ, որոնք բացահայտվել են բարբառային միավորների կոնկրետ ուսումնասիրության ժամանակ: Բառային հատկանիշներն արտացոլում են միևնույն հասկացության տարբեր նշանակումները, տեղ է տրված նաև որոշակի թվով բառերի իմաստային տարբերակմանը տարբեր բնագավառներում: Քերականական հատկանիշներն արտացոլում են բարբառների հիմնական ձևաբանական, մասամբ շարահյուսական առանձնահատկությունները: Զուգաբանությունների ընտրության հիմքում ընկած է միևնույն բերականական իմաստի տարբեր արտահայտության սկզբունքը: Հնչյունական զուգաբանությունները հենվում են այն տարբերությունների վրա, որոնք առկա են բարբառներում գրաբարյան ձայնավորների, բաղաձայնների և երկբարբառների համակարգի համեմատությամբ:

Նյութերի հավաքումն իրականացվում է թե՛ Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս հայաբնակ վայրերի համատարած ընդգրկման մեթոդով: Ընդ որում, ատլասի կազմողների նպատակն է վերականգնել բարբառների աշխարհագրական փոխտեղաբաշխման պատմական պատկերը, որ գոյություն ուներ 1915 թվից առաջ: Այդ պատճառով հատուկ ուշադրություն է դարձվում նյութի հավաքմանը այլ վայրերում բնակություն հաստատած արևմտահայ բարբառների ներկայացուցիչ բարբառախոսներից: Մյուս կարևոր գործնական սկզբունքն է առաջին հերթին մայրաքաղաքի և արդյունաբերական մյուս խոշոր կենտրոնների շրջակայքում տեղաբաշխված բարբառների ընդգրկումը, բանի որ նրանք ավելի են ենթակա գրական լեզվի և միջբարբառային խոսակցական լեզվի ազդեցությանը: Նյութի հավաքման գործին բացի մասնագետ-բարբառագետներից մասնակցում են նաև բանասիրական ֆակուլտետների ուսանողները և գյուղական դպրոց-

ների հայոց լեզվի ուսուցիչները, քանի որ խնդրի իրականացումը գիտական և մշակութային կարևոր նշանակություն ունի:

Շարունակվում է նաև առանձին՝ քիչ ուսումնասիրված բարբառների ու խոսվածքների մենագրական նկարագրությունը: Ընդ որում հետազոտողները ձգտում են հաղթահարել բարբառների նկարագրման նախկինում ընդունված սխեմայի թերությունները, մասնավորապես, պատմական (հնչյունական համակարգի) և համաժամանակյա (քերականական կառուցվածքի) նկարագրության սկզբունքների խառն օգտագործումը: Հայ բարբառներին նվիրված նորագույն ուսումնասիրություններում (Դ. Կոստանդյան, Մ. Հանեյան) ուշադրություն է դարձվում բարբառների հնչույթային համակարգի նկարագրությանը, հնչույթների և նրանց տարբերակների բացահայտմանը հնչույթաբանական հակադրությունների մեթոդի կիրառմամբ, բարբառների բնորոշ քերականական հատկանիշների հայտնաբերմանը, գրաբարի կամ ժամանակակից հայերենի քերականական սխեմաներից զերծ նկարագրության ստեղծմանը:

Հայ բառարանագրություն. լեզվաբանական աշխատանքի այս բնագավառը ևս Հայաստանում վաղեմի և հարուստ ավանդույթներ ունի:

Հայերենի ձեռագիր հնագույն բառարանները հազարամյա սլաոմություն ունեն, իսկ առաջին տպագիր բառարանը (Յ. Ռիփոլայի «Բառագիրք հայ-լատին»-ը) լույս է տեսել 1621 թվին: Այդ ժամանակից սկսած մինչև XX դ. 20-ական թթ. հրատարակվել են ավելի քան 250 ամենատարբեր բնույթի ու ծավալի (բացատրական, երկլեզվյան և բաղմալեզվյան, թարգմանական, գալստական, տերմինաբանական, հանրագիտական, ուղղագրական, փոխառությունների, հոմանիշների, անձնանունների և այլ) բառարաններ:

Սակայն նույնիսկ այսպիսի հարուստ բառարանագրական ժառանգությունը չէր կարող լրիվ չափով բավարարել հայ հասարակության աճող պահանջները համաժողովրդական կրթության և ժողովրդի մշակութային մակարդակի բարձրացման խնդիրները լուծելիս:

Այդ նպատակով 20-ական թվերի հենց սկզբից ծավալվեց բառարանագրական եռանդուն աշխատանք, որին մասնակցում էին ինչպես հայտնի լեզվաբան-բառարանագիրներ (Մ. Աբեղյան, Հ. Աճառյան, Ե. Տեր-Մինասյան, Թ. Ավդալբեգյան, Պ. Սոտնիկյան, Ա. Ղարիբյան), այնպես էլ գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառների խոշոր մասնագետներ՝ բժշկիներ, ճարտարագետներ, ինժեներներ, տնտեսագետներ, իրավաբաններ և այլն:

Սովետահայ լեզվաբանության զարգացման առաջին շրջանում (1920—1950 թթ.) հրատարակվեցին մի ամբողջ շարք բացատրական և թարգմանական (գլխավորապես ռուս-հայերեն) տերմինաբանական բառարաններ: Հիշատակության արժանի են քաղաքական (1928, 1930²), իրավաբանական (1924), ուղղմական (1925, 1941), բժշկական (1924, 1956², 1937), կազմախոսական (1934), նյարդաբանական (1936), բուսաբանական (1941), ավտոտրանսպորտային (1945), երկաթուղային (1927), առևտրա-հաշվապահական (1927), շինարարական կառուցվածքների (1928), աշխատանքային օրենսդրության, սլաշտոնների և արտադրական մասնագիտությունների (1931, 1934²), գրադարանային (1950) և այլ բնագավառների տերմինաբանություններ նվիրված բառարաններ: Հիշատակված բառարանների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Մ. Աբեղյանի կազմած «Ռուս-հայերեն ուղղմական տերմինների բառարանը»՝ տերմինաշինության ճիշտ սկզբունքների մշակման ու կիրառման տեսակետից: Այստեղ հեղինակը ոչ միայն հաջողությամբ ընտրել է ռուսերեն ուղղմական տերմինների հայերեն համարժեքները, այլև ստեղծել մի շարք նոր տերմիններ, որոնք հարստացրել են հայերեն ուղղմական տերմինաբանությունը:

Ռուս-հայերեն բառարանագրությունը, որ հատուկ զարգացում ստացավ սովետական իշխանության տարիներին, այդ ժամանակաշրջանում ներկայացված էր «Հայ-ռուսերեն նոր բառարանով» (Թ. Ավդալբեգյան, Պ. Սոտնիկյան, Ե. Տեր-Մինասյան, Վ. Փոթեյան), որն ընդգրկում էր 80 հազար բառ և արտահայտություն, և մի ամբողջ շարք այլ, այդ թվում

դպրոցական կամ համառոտ ուս-հայերեն և հայ-ուսերեն բառարաններով:

«Ռուս-հայերեն նոր բառարանի» կազմողները, ինչպես նշվում է առաջաբանում, նպատակ ունեին ոչ միայն ներկայացնելու իրենց ժամանակաշրջանի ուսերենի բառապաշարը, հատկապես նրա այն նոր շերտը, որ բառապաշարի մեջ էր ներմուծվել հասարակական-քաղաքական կյանքի վերափոխման և գիտության զարգացման հետևանքով, այլև արտացոլելու հայոց լեզվի բառապաշարի հարստությունը՝ առաջնորդվելով նորմատիվ խիստ ընտրության սկզբունքով և խուսափելով մի կողմից՝ նեղ բարբառային, տեղական բառերից ու արտահայտություններից, մյուս կողմից՝ գրաբարյան հնացած բառապաշարից: Անհրաժեշտ է նշել, որ բառարանը հիմնականում հասել է իր նպատակին: Նոր, ծավալուն բառարանի անհրաժեշտությունը ղգացվում էր նաև ուղղագրության փոփոխման հետևանքով, որ դժվարացրել էր հին բառարաններից օգտվելը (նոր ուղղագրության առաջին բառարանը լույս տեսավ 1930 թ.¹ Ն. Ալավերդյան, «Ուղղագրական նոր բառարան»):

Այդ ժամանակաշրջանում էլ լույս են տեսնում դպրոցական թուրք-հայերեն, ադրբեջաներեն-հայերեն, առաջին հայ-բրդերեն (ընդհանուր և տերմինաբանական) բառարանները (1933, 1936): Ավելի ծավալուն հայ-բրդերեն բառարանը լույս տեսավ ավելի ուշ՝ 1957 թ.:

Այս շրջանի բառարանագրության մեջ ամենախոշոր ներդրումը եղավ Ս. Մալխասյանցի՝ արդեն հիշատակված «Հայոց լեզվի բացատրական բառարանը» (1944—1945), որ արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի: Բառարանը պարունակում է 120 հազար բառահոգված, որոնք արտացոլում են գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի և բարբառների բառապաշարը: Սա փաստորեն պատմական բացատրական բառարան ստեղծելու առաջին փորձն է, որը ընդգրկում է հայերենի ողջ բառապաշարը՝ սկսած նրա գրի առնվելու պահից մինչև օրս: Բառարանի զլխավոր արժանիքներն են բառապաշարի լայն ընդգրկումը, բառերի տարբեր իմաստների

առանձնացումն ու ճշգրիտ բացատրությունները, հատկապես բառիմաստի պատմական փոփոխության արտացոլումը և ուսման հարուստ նշումները:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ բառարանը կազմելիս համաժամանակյա և պատմական սկզբունքների խառնումը հեղինակի համար ստեղծել է դժվարություններ, որոնք նա ոչ միշտ է կարողացել հաղթահարել: Բավականաչափ դիտական մշակում չունի նաև բարբառային բառապաշարը:

Բառարանագրության ասպարեզում այդ ժամանակաշրջանում արդյունավետ աշխատում էր Հ. Աճառյանը, որի ներգրումը հայ բառարանագրության մեջ չի սահմանափակվում նրա «Արմատական բառարանով»: Դեռևս 1902 թ. նա հրատարակել է թուրքերենից հայերեն փոխառյալ բառերի բառարան, որն ընդգրկում է հայ բարբառներում, հատկապես Պոլսի բարբառում գործածվող 4000 թուրքերեն բառ, իսկ 1913 թ. լույս է տեսնում նրա «Գավառական բառարանը», որ մինչև վերջին ժամանակներս մնում էր բարբառային բառապաշարի ամենարեղարձակ բառարանը, ընդ որում, Հ. Աճառյանը բառարանի մեջ չէր ներառել փոխառությունները և հին հայերենի շրջանից վկայված բառերը:

«Արմատական բառարանին» յուրատեսակ հավելում է Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», որը մեծ նշանակություն ունի ինչպես լեզվաբանության (քանի որ այստեղ արվում են անձնանունների ստուգաբանությունը, նրանց հնչյունական և փոքրացուցիչ-փաղաքշական տարբերակները), այնպես էլ պատմության և բանասիրության համար լայն իմաստով (բառարանում հավաքված են այն բոլոր տեղեկությունները, որ պահպանվել են զրական աղբյուրներում տվյալ անունը կրող անձնավորության մասին՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XV դարը, իսկ առանձին դեպքերում՝ մինչև նոր ժամանակները):

Մեծ ներգրում ունի Հ. Աճառյանը նաև մասնագիտական, տերմինաբանական, բարբառային (առանձին բարբառների նվիրված նրա մենագրություններում) բառարանների կազմման գործում, ինչպես նաև բառարաններում չարտացոլված

և գրական հին հուշարձաններում պահպանված բառաշերտի ուսումնասիրության մեջ (Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ, 2 հտ., Վենետիկ, 1913—1922):

Սովետահայ լեզվաբանության զարգացման երկրորդ շրջանում բառարանագրական աշխատանքի բնագավառը զգալիորեն ընդլայնվում է: Տերմինաբանական, զարոցական, ուղղագրական, երկլեզվյան-թարգմանական բառարանների կազմման գործը շարունակելուն զուգընթաց երևան են գալիս նաև նոր տիպի բառարաններ՝ զարձակածաբանական, բազմալեզվյան, շրջուն (հանդաբառարան), հաճախականության, հոմանիշների, հականիշների, տարբեր հեղինակների լեզվի, համաբարբառ և այլն:

Բառարանագրական աշխատանքը հիմնականում կենտրոնանում է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: Ինստիտուտի աշխատակիցները կազմել և 1954—1958 թթ. հրատարակել են «Ռուս-հայերեն բառարանը», որը պարունակում է մոտ 100 հազար բառ և արտահայտություն: Բառարանն աչքի է ընկնում ինչպես բառանյութի լայն ընդգրկմամբ, այնպես էլ զարձակածաբանության հարստությամբ ու ուսերեն բառերի տարբեր իմաստների ճշգրիտ թարգմանությամբ: Սակայն բառարանում երբեմն բառերի թարգմանության փոխարեն տրվում է նրանց բացատրությունը, որ բառարանը մոտեցնում է բացատրական բառարանների տիպին [հմտ. 66, 11, 63—64]:

Բառարանագրության ասպարեզում լեզվի ինստիտուտի նշանակալից ներդրումներից է նաև «Փամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (1972—1980), որն ընդգրկում է 100 հազար բառարանային միավոր: Սա հայոց լեզվի առաջին բառարանն է, որտեղ նոր գրական հայերենի բառապաշարն առանձնացված է զրաբարի և բարբառների բառանյութից: Նույն սկզբունքներով է կառուցված նաև է. Աղաջանի ավելի ընդարձակ (135 հազար բառ և 11 հազար զարձակածաբանական միավոր պարունակող) «Արգի հայերենի բացատրական բառարանը» (1976): Բառարանի համեմատաբար փոքր ծավալը բառահոգվածների ավելի մեծ քանակի

պայմաններում բացատրվում է նրանով, որ է. Աղայանի բառարանում քիչ են բերվում գրականության մեջ վկայված օրինակներ: Բառացանկի ծավալի տեսակետից է. Աղայանի բառարանը դիջում է միայն Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանին» (152 հազար բառ), որը լույս է տեսել 1973 թ., թեև անհրաժեշտ է նաև նշել, որ է. Աղայանի բառարանը պարունակում է մինչև 15 հազար բառ, որոնք գործածվել են հայ նոր գրականության մեջ և ոչ մի այլ բառարանում արտացոլված չեն: Այս բառարանի մի այլ կարևոր արժանիքն է բառային նյութի գիտական մշակման բարձր մակարդակը, բառերի տարբեր իմաստների սահմանադատումը, նրանց ճշգրիտ բացատրությունը, ոճական հարուստ նշումները: Հետաքրքրական է նաև բառարանի առաջաբանում տրված՝ արդի հայերենի բառապաշարի քնդհանուր տեսությունը:

Սովետական շրջանի հայ բառարանագրության բնագավառում մեծ ափանդ ունի Ա. Ղարիբյանը: Բացի վերը հիշատակված բազմաթիվ գալրոցական, ուղղագրական, տերմինաբանական (այդ թվում ուրիշների հեղինակակցությամբ ստեղծված) բառարաններից, նա հեղինակն է ամենագործածական «Ռուս-հայերեն բառարանի», որն արժանացել է հայկական ՍՍՀ պետական մրցանակի և ունեցել է մի քանի հրատարակություն:

Ա. Ղարիբյանի նախաձեռնությամբ և նրա գործուն աջակցությամբ սկսվել է աշխատանքը համաբարբառ բառարանների կազմման ուղղությամբ, որոնք ունեն կարևոր գիտական և մշակութային նշանակություն: Մեկ տասնամյակից էլ պակաս ժամանակամիջոցում լույս են տեսել մոտ երկու տասնյակ համաբարբառներ՝ նվիրված հիմնականում հին մատենագրության ինքնուրույն ստեղծագործությունների լեզվին, սկսած V դարի հեղինակներից (Եղնիկ Կողբացի, Խորենացի, Բուզանդ, Ագաթանգեղոս, Նղիշե, Կորյուն, Գավիթ Անհաղթ, ալեուհեսե Նարեկացի և շատ ուրիշներ): Համաբարբառներում տրվում են տվյալ հեղինակի գործածած բոլոր բառերը, նշելով նրանց բոլոր գործածությունները համապատասխան

բնագրային հղումներով, որ հնարավորություն է տալիս օգտագործել համաբարբառները որպես տվյալ երկում տեղ գտած լեզվական, պատմական և այլ կարգի տեղեկությունների արժեքավոր աղբյուր:

Համաբարբառ բառարանների տեսակին են հարում նաև առանձին հեղինակների լեզվի բառարանները, որոնց կազմման ուղղությամբ նույնպես աշխատանքներ են տարվում լեզվի ինստիտուտում: Դրանցից կարելի է հիշատակել Խ. Աբովյանի (Գ. Գասպարյան), Սայաթ-Նովայի (Ա. Քոչոյան), Հ. Թումանյանի (Լ. Պետրոսյան), Հ. Հովհաննիսյանի (Ա. Հակոբյան), Պ. Սեակի (Ա. Պապոյան) լեզվի բառարանները:

Այսուս տիպերի բառարանների մեջ իրենց ծավալով ու նշանակությամբ առանձնանում են Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը (1967), Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (1975), Վ. Բրյուսովի անվան ինստիտուտի հեղինակների կազմած «Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարանը» (1975): Հրատարակվել են նաև հատկանիշների (Ռ. Շալունց), համանունների բառարանները (Ն. Գևորգյան, Ռ. Շալունց), Հանգաբառարանը (հեղինակային կոլեկտիվ, 1976) և այլն: Լեզվի ինստիտուտում կազմվել և հրատարակության մեջ են գտնվում հայ-ռուսերեն, բարբառային բառերի, թեմատիկ, հաճախականության ծավալուն բառարանները: Կազմվում է գրաբար-աշխարհարար թարգմանական բառարանը, սկսվել են աշխատանքները հայերենի ստուգաբանական և պատմական բառարանների համար քարտարան կազմելու ուղղությամբ: Շարունակվելու է աշխատանքը համաբարբառների շարքի վրա:

Լեզվի ինստիտուտում ստեղծված են բառարանագրական սարքեր բնույթի աշխատանքների համար նախատեսված քարտարաններ, որոնց քարտերի ընդհանուր քանակը 15 միլիոնից ավելի է:

Երևանի համալսարանում կազմում են հայկական տեղանունների ծավալուն բառարան (որն ընդգրկելու է պատմական

Հայաստանի տարածքի բոլոր տեղանունները՝ հնագույն վկայություններով), ինչպես նաև հայերենի բառակազմական մասնիկների բառարան:

Անհրաժեշտ է հիշատակել նաև հայ բառարանագիրների աշխատանքը միջնադարյան բառարանագրական հուշարձանների հրատարակման ուղղությամբ (Ամիրգովլաթ Ամասիացու բժշկագիտական բառարանը, Երեմիա Մեղրեցու բառարանը և այլն), ինչպես նաև մատենագիտական հազվագյուտ արժեք ունեցող՝ անցյալի մեծարժեք բառարանների վերահրատարակությունները «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», 1836, II հրատ.՝ 1979, «Հայերեն արմատական բառարան», 1926—1935, II հրատ.՝ 1971—1979):

Հայ լեզվաբանության պատմություն. Հայոց լեզվի կառուցվածքի, գործառության և դարգացման բազմակողմանի ուսումնասիրումից բացի սովետահայ լեզվաբաններին հետաքրքրել են նաև անցյալի գիտական ժառանգության, հայ լեզվաբանական մտքի դարգացման ուղիների հետազոտության հարցերը: Այդ բնագավառում առաջին առավել լիակատար աշխատությունն է է. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմությունը» (1958—1962): Իր հետազոտության խնդիրները հեղինակը սահմանափակում է ընդհանուր լեզվաբանական բնույթի որոշակի պրոբլեմների շրջանակով, որոնք արտացոլում են գտել հայ լեզվաբանության մեջ, այսինքն՝ լեզվի փիլիսոփայությամբ, լեզուների (այդ թվում հայերենի) ծագման խնդիրներով, ինչպես նաև հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությամբ: Բուն քերականական ուսմունքների և բարբառագիտության հետ կապված հարցերը նա գուրս է թողնում իր խնդիրների շրջանակից, բացառությամբ հայ բարբառների ծագման և գրաբարի հետ ունեցած նրանց փոխհարաբերության խնդրի, որպես հայոց լեզվի պատմության հետ կապված մի հարցի, որի լուծման ընթացքում բախվել են տարբեր դպրոցներ և ուղղություններ: Որոշակի ուշադրություն է դարձվում նաև ստուգաբանության հարցերին: Հին հունական և հին հնդկական քերականագիտության սկզբնավորումից մինչև XIX դարը լեզվաբա-

նության զարգացման համառոտ ակնարկից հետո հեղինակը տալիս է հայ լեզվաբանության պատմության շրջանաբաժանումը, առանձնացնելով երեք հիմնական շրջան. 1) V դարից մինչև XIX դարի սկիզբը, 2) XIX դ. սկզբից մինչև XX դ. 20-ական թթ., 3) XX դ. 20-ական թթ. մինչև մեր օրերը: Որպես այս շրջանների առանձնացման հիմք հեղինակն ընդունում է լեզվաբանական գիտության զարգացման ընդհանուր ուղղվածությունը, բնորոշելով առաջին շրջանը որպես սկզբնական, նախապատրաստական շրջան, իսկ երկրորդը՝ լեզվաբանության՝ որպես առանձին գիտություն ձևավորվելու շրջան: Երրորդ շրջանը է. Աղայանը անվանում է սովետական շրջան: Յուրաքանչյուր շրջանում հեղինակն առանձնացնում է դպրոցներ և ուղղություններ՝ ելնելով հիմնականում հայոց լեզվի ծագման ու բնույթի մասին լեզվաբանների ունեցած հայացքներից: է. Աղայանը հանգամանորեն բնութագրում է տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին՝ ինչպես հայ, այնպես էլ օտարազգի լեզվաբան-հայագետների հայացքները, մանրամասն վերլուծում է հայագիտության բնագավառին վերաբերող նրանց կարևորագույն աշխատությունները, դնահատում է նրանցից յուրաքանչյուրի ներդրումը հայ լեզվաբանության մեջ:

Քերականական ուսմունքների պատմությանն են նվիրված Գ. Զահուկյանի երկու մենագրությունը՝ «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.)» (1954) և «Գրաբարի քերականության պատմություն (XVII—XIX դդ.)» (1974), ինչպես նաև նրա «Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը XVIII—XIX դդ.» գոկտոբրական դիտերտացիան: Նրշված աշխատությունների հիմնական դրույթների ու եզրակացությունների ընդհանրացումն է հեղինակի «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» (1978) գրքի «Լեզվաբանական ուսմունքների պատմություն» գլուխը: Նշված մենագրություններից առաջինում Գ. Զահուկյանը քննում է հայ քերականական մտքի սկզբնավորման ու զարգացման առանձին շրջանների հետ կապված հարցերը, ներածության մեջ տրվում է հին հու-

նական քերականության պատմական զարգացման համառոտ ակնարկ և բացահայտվում է նրա նշանակությունը հայ լեզվաբանական մտքի ձևավորման ու վաղ շրջանի պատմության համար: Գրքում գրաբարի քերականությանն ու ուղղագրությանը նվիրված միջնադարյան ձեռագիր աշխատությունների հիման վրա դիտարկվում է քերականագիտական ուսմունքների զարգացումը V—XV դդ. ընթացքում: Առանձին ուշադրություն է դարձված քերականների կողմից հին հայերենի համակարգի առանձնահատկությունների բացահայտմանը, հունական, ավելի ուշ՝ լատինական քերականության ազդեցությանը և այդ ազդեցության հետագա հաղթահարմանը: Երկրորդ մենագրությունում ներկայացված է հայ քերականագիտության հետագա զարգացումը: Հեղինակն առանձնացնում է լատինատիպ (XVII դ.—XVIII դարի III քառ.) և ինքնուրույն (XVIII դ. III քառ.—XIX դ. կեսեր) քերականությունների շրջաններ, ուսումնասիրում քերականագիտական աշխատությունները, առանձնացնելով լատինատիպ (տեխնիկական, ռացիոնալիստական, բանասիրական) և հունալատինատիպ քերականությունները: Ինքնուրույն քերականությունները նա բաժանում է քննական, ընտրողական և հավաքողական տիպերի: Քերականագիտական աշխատությունները բնակվում են տեսական հարցերի ուսումնասիրության և գրաբարի քերականական համակարգի՝ նախկինում չնկատված առանձնահատկությունների բացահայտման մեջ յուրաքանչյուր հեղինակի բերած նորության տեսակետից: Նոր շրջանի լեզվաբանական գրականության մեջ աշխարհաբարի հարցերի արտացոլմանը նվիրված աշխատությունում Գ. Ջահուկյանը հատկապես անդրադառնում է գրաբարի քերականական սխեմայից զերծ աշխարհաբարի քերականությունների ստեղծման, նոր գրական հայերենի առանձնահատկությունների բացահայտման, նրա նորմավորման սկզբունքների մշակման և հետագա զարգացման ուղիների որոնման խնդիրներին:

Բացի վերոհիշյալ ընդհանուր բնույթի աշխատություններից կան նաև այլ գործեր՝ նվիրված քերականագիտական առանձին ուղղությունների և դպրոցների, միջնադարի առան-

ձին հեղինակների լեզվաբանական ժառանգության գնահատմանը՝ նրանց բերականական աշխատությունների քննական բնագրերի հրատարակմամբ հանդերձ։ Այս բնագավառում ղգալի աշխատանք են կատարել Լ. Խաչիկյանն ու Ս. Ավագյանը (Վարդան Արևելցու և Հովհաննես Քոնեցու աշխատությունների բնագրերի հետազոտություն և հրատարակում), Գ. Զահուկյանը (Դավիթ բերականի երկի անհայտ բնագրի հրատարակում), Լ. Խաչերյանը («գրչության արվեստի» վերաբերյալ աշխատությունների, ինչպես նաև Սասյի Նչեցու և Վարդան Արևելցու բերականությունների ուսումնասիրություն և հրատարակում), Ե. Մելքոնյանը (Դավիթ Զեյթունցու բերականական աշխատության ուսումնասիրություն ու հրատարակում)։ Հունարան գպրոցի գործունեությանը և հայերենի բերականական տերմինաբանության ստեղծման գործում նրանց ունեցած դերին մեծագրական աշխատություն է նվիրել Ա. Մուրադյանը։ Վ. Սառուկյանը զբաղվել է XVIII դ. լատինատիպ բերականության պատմությամբ։

Հետազոտողների ուշադրությունն են դրավել նաև լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառների զարգացման պատմությունը։ Այսպես, հայ բառարանագրության պատմությունը իր սկզբնավորումից մինչև մեր դարի 60-ական թթ. ներկայացված է Գ. Գառապրյանի «Հայ բառարանագրության պատմություն» գրքում։ Հեղինակը համառոտ ակնարկով ներկայացնում է բառարանագրական աշխատանքի առանձնահատկությունները՝ մինչև ձևապիտ բառարանների ստեղծումը, շարադրում է միջնադարյան հայ բառարանագրության պատմությունը, այնուհետև ավելի մանրամասն կանգ է առնում սարբեր տիպի տպագիր բառարանների դասակարգման ու բնութագրման վրա։ Հատուկ բաժիններ են նվիրված ժամանակակից՝ սովետական և սփյուռքի հայ բառարանագրությանը։

2. Ամալյանի «Միջնադարյան հայ բառարանագրության հուշարձանները» եռահատոր աշխատությունը (I—III հհ., 1966—1973) նվիրված է հայ միջնադարյան բառարանագրության կազմավորմանն ու զարգացմանը, տեսական հարցերի

քննությունը, բառարանագրական հուշարձանների լեզվաբանական և բանասիրական վերլուծությունը, նրանց բնույթի և պատմական ու լեզվաբանական արժեքի որոշմանը: Միջնադարյան հայ բառարանագրության մեջ Հ. Ամալյանը առանձնացնում է բացատրական, թարգմանական, ուղղագրական, բառադարձվածաբանական, մասնագիտական բառարանների տիպեր, ինչպես նաև հոմանիշների, հատուկ անունների, առանձին երկերի ու հեղինակների լեզվի բառարաններ, այդպիսով բացահայտելով անցյալի հարուստ բառարանագրական ժառանգությունը: Հ. Ամալյանը հրատարակել է նաև Ե. Մեղրեցու «Բառգիրք հայոց» բառարանի բնագիրը (1975): Հայ բառարանագրության պատմությամբ զբաղվել են նաև Ա. Սուքիասյանը, Հ. Կոստանյանը, Լ. Գեարոսյանը, Է. Վարդումյանը և ուրիշներ:

Հ. Աճառյանը, Ա. Դարիրյանը, Գ. Զահեկյանը, Ա. Գրիգորյանը, Ն. Սիմոնյանը, Ա. Խաչատրյանը և ուրիշներ մեծ ուշադրություն են դարձրել հայ բարբառագիտության պատմությանը, մասնավորապես հայ բարբառների դասակարգման հարցի պատմությանը:

Ուսումնասիրության առարկա են դարձել նաև առանձին լեզվաբանների հայացքները: Այսպես, աշխատություններ են նվիրվել Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ա. Ալաբույանի, Ս. Պալասանյանի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի հայացքներին և հայ լեզվաբանության մեջ նրանց մոծած ավանդի բացահայտմանն ու գնահատմանը:

Լեզվական կառուցվածքի առանձին կողմերի ուսումնասիրության պատմությանը նվիրված աշխատություններից հատուկ ուշադրության է արժանի Հ. Բարսեղյանի «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» մենագրությունը (1980):

Շատ աշխատություններ ունեն ընդարձակ ներածություններ, որտեղ տրվում է հարցի պատմության ակնարկ:

Ընդհանուր լեզվաբանություն. Սովետահայ-լեզվաբանների ավագ և միջին սերնդի ընդհանուր լեզվաբանական հայացքներին մենք որոշ չափով անդրադարձանք Ն. Մառի տեսության նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքը քննելիս,

ինչպես նաև մարքսիստական լեզվաբանության հիմնական տեսական սկզբունքների մշակման մեջ նրանց ներմուծած ավանդը գնահատելիս: Սակայն նույնիսկ սովետահայ լեզվաբանության զարգացման առաջին շրջանում նրանց հետաքրքրությունները տեսական լեզվաբանության բնագավառում չէին սահմանափակվում «լեզվի նոր ուսմունքի» շրջանակներով:

Ընդհանուր տեսական հարցերը հատկապես հետաքրքրում էին Գ. Ղափանցյանին: Դեռևս 1914 թ. նա հրատարակում է «Լեզվաբանական առարկաները և լեզուն» գրքույկը, իսկ 1939 թ. լույս է տեսնում նրա «Ընդհանուր լեզվաբանությունը»՝ հայ լեզվաբանության մեջ ընդհանուր լեզվաբանության առաջին դասընթացը: Այս աշխատության մեջ Գ. Ղափանցյանը առաջինը հայ լեզվաբանության մեջ մշակում է հնչույթի ուսմունքը, հիմնականում հետևելով Բոգոլենն զբուտենիի դպրոցին: Գ. Ղափանցյանը դարձյալ առաջինը հայ լեզվաբաններից հասակորեն առանձնացնում է ձևույթի հասկացությունը ընդհանրապես լեզվական ձևի հասկացությունից: Զևույթի նրա սահմանումը և իմաստային-գործառական դասակարգումը կարող են ընդունելի լինել նաև այսօր:

Հ. Աճառյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները շարադրված են նրա «Լիակատար բերականություն» ներածական հատորում, որտեղ նա հիմնականում հարում է Ծ. զբ Սոսյուրի և իր ուսուցիչ Ա. Մեյերի սոցիոլոգիական ուղղությանը:

Արդի փուլում տեսական պրոբլեմների մշակման մեջ առավել կարևոր ավանդ ունեն է. Աղայանն ու Գ. Զահուկյանը: 1947 թ. լույս է տեսնում է. Աղայանի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը», իսկ 1949 թ.՝ «Լեզվաբանության ներածությունը», որը մի շարք հետագա հրատարակություններ ունեցավ և մինչև այսօր օգտագործվում է որպես բուհական դասագիրք: Վերջին աշխատանքում հեղինակի կողմից ինքնուրույն մեկնաբանություն ստացած հարցերից ուշագրավ են հնչույթի, վանկի, հնչույթաբանական հակադրության,

հնչույթների բաշխման և այլ հասկացությունների սահմանումը:

Պետք է նշել նաև է. Աղայանի ավանդը պատմահամեմատական լեզվաբանության մեթոդիկայի և տեսական սկզբունքների մշակման գործում:

Տեսական լեզվաբանության խնդիրների առավել լայն ընդգրկում գտնում ենք Գ. Զահուկյանի աշխատություններում: Նրանց մեջ առաջին հերթին պետք է հիշատակել «Լեզվաբանության պատմություն» երկհատոր մենագրությունը (I—II հհ., 1960—1962), որտեղ ներկայացված է լեզվաբանության սկզբնավորումն ու զարգացումը ամենալիակատար աշխարհագրական (Հին Նեփյադոս, Միջագետք, Հնդկաստան, Չինաստան, Հունաստան և այլն) և ժամանակագրական (մ. թ. ա. III հազ.—մ. թ. XX դ. կեսեր) ընդգրկմամբ: Այդ աշխատության մեջ հատկապես արժեքավոր է լեզվաբանության պատմության՝ հեղինակի մշակած շրջանաբաժանումը, այս գիտության զարգացման ողջ ընթացքում ի հայտ եկած զանազան դպրոցների և ուղղությունների դասակարգումն ու ճշգրիտ բնութագրումը, զարգացման տարբեր շրջանների համար բնորոշ լեզվաբանական աշխատանքի առանձին բնագավառների սահմանումը, լեզվաբանության պատմության մեջ նշանակալից դեր խաղացած առանձին լեզվաբանների հայացքների բնագատական լուսարանումը:

Գ. Զահուկյանի ուշագրության կենտրոնում են մի շարք կարևոր տեսական խնդիրներ, որոնց լուծման մեջ նա ինքնուրույն մոտեցում է ցուցաբերում: Մասնավորապես, պետք է նշել լեզվաբանական ընդհանրական կաղապարի կառուցումը, լեզվաբանական մեթոդների դասակարգումն ու զննահատումը, լեզվաբանական միավորների ու նրանց տարբերակիչ հատկանիշների հասկացությունների սահմանումը և այլ հարցեր: Այս բնագավառում կատարված հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» (1978) աշխատության մեջ: Ընդհանուր լեզվաբանական հարցերը արտացոլում են գտել նաև Գ. Զահուկյանի մի այլ աշխատության մեջ [9], որտեղ հեղինակը մշակում է

լեզվական փաստերի նոր դասակարգում տարբերակիչ հատկանիշները նվազագույն անհրաժեշտ բանակի հիման վրա, տալիս է ինչպես ամբողջ լեզվական համակարգի, այնպես էլ նրա «մանրահամակարգերի» կաղապարման ընդհանուր սկզբունքներ, առաջ է քաշում լեզվի և խոսքի փոխհարաբերության նոր բմբունում, դասակարգում է լեզվաբանական գիտակարգերն ու մշակում լեզվաբանության կառուցվածքը (այսինքն՝ առաջ է քաշում լեզվաբանության, որպես առանձին գիտության կաղապարման զաղափարը), լեզվաբանական հետազոտության բնագավառն է ներմուծում գրաբանությունն ու շարժաբանությունը որպես արտահայտաբանության բաղադրիչ մասեր:

Հայ գիտնականները (ինչպես լեզվաբանները, այնպես էլ փիլիսոփաները) զգալի ավանդ ունեն լեզվական նշանի տեսության մշակման խնդրում, որը կարևոր նշանակություն ունի ինչպես լեզվաբանության, այնպես էլ նշանագիտության (սեմիոտիկայի), փիլիսոփայության և հոգեբանության համար: Այս բնագավառում պետք է հատկապես նշել Լ. Աբրահամյանի [80], Է. Ավետյանի [81], Ս. Վարդապետյանի, Ռ. Ավույանի աշխատությունները, որոնց հեղինակներին հետաքրքրում են հիմնականում նշանների տեսության իմացաբանական հարցերը, բառի՝ որպես նշանաբանական կատեգորիայի, նշանակությունը, լեզվական նշանի էությունը, նշանի և սիմվոլի, նշանի և պատկերի փոխհարաբերությունը և այլն: Է. Ավետյանի «Իմաստ և նշանակություն» գրքում տրվում է այդ կատեգորիաների ինքնատիպ մեկնաբանությունը՝ իմացաբանական, նշանագիտական, լեզվաբանական ու արամաբանական հայեցակետերից, բնութագրում են մի շարք կարևոր լեզվական երևույթներ (հասկացություն, բառ, նախադասություն, փոխաբերություն և այլն)՝ կապված իմաստի և նշանակության պրոբլեմի հետ:

Լեզվաբանական, նշանագիտական և լեզվափիլիսոփայական հարցերի լայն շրջանակ է ընդգրկում նաև Է. Աթայանի «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» մենագրությունը (1981): Հեղինակին հե-

տարրերում են «լեզվի և լեզվական միավորների ներքին ձևավորումն ու դործառությունը, հաղորդակցման, սոսրողման, նշանային ներկայացման բնույթն ու տիպաբանությունը, լեզվագիտակցության մակարդակները, սուբյեկտիվ և օբյեկտիվ դործոնների դիալեկտիկան լեզվական և ոչ լեզվական աշխարհներում, որոնք դիտվում են որպես մեկ միասնական նշանային տմբողջության միմյանց հետ հարաբերակցվող և մեկը մյուսից արտածելի գոյաձևեր» (86, 2):

Ուշադրություն է դարձվում նաև ժամանակակից արտասահմանյան որոշ տեսությունների ու վարկածների, մասնավորապես լեզվական հարաբերականության տեսության, սեմանտիկ փիլիսոփայության մեջ լեզվի հարցերի մեկնաբանության (Գ. Բրուտյան), ն. խոմսկու հայեցակարգի ու մեթոդի (Գ. Զահուկյան) քննադատությանը:

Լեզվի ու արամաբանության, լեզվի և իրականության, աշխարհի գիտական պատկերի ձևավորման մեջ լեզվի դերի, մասծողության վրա լեզվի ազդեցության պրոբլեմներին են նվիրված Գ. Բրուտյանի աշխատությունները, հատկապես նրա «Սեմանտիկան փիլիսոփայության քննական վերլուծություն» (1962) և «Փիլիսոփայություն և լեզու» (1972) մենագրությունները: Այդ հարցերի քննության ժամանակ հեղինակը տալիս է ժամանակակից բուրժուական փիլիսոփայության որոշ ներկայացուցիչների, մասնավորապես, Բ. Ռասելի և Լ. Վիտգենշտայնի հայացքների քննադատական վերլուծությունը:

Լեզվաբանական տեսության մասնակի հարցերի մեջ, որոնք հետաքրքրում են հայ լեզվաբաններին, կարելի է նշել խոսքի մասերի ուսմունքը (Գ. Սևակ, Գ. Զահուկյան, Է. Աղալան, Ս. Աբրահամյան, Հ. Բարսեղյան), շարահյուսական նվազագույն միավորի և շարահյուսական սարրակա՛ն կառուցվածքի հասկացությունը (Է. Աթայան), լեզվական հաղորդակցումը և լեզվագիտակցության պրոբլեմը (Է. Աթայան) և այլն:

Կարևոր տեղ է գրավում նաև լեզվի ձևականացված քննության սկզբունքների և մեթոդների մշակումը և նրանց կիրա-

սումը հայոց լեզվի լեզվական կառուցվածքի ուսումնասիրության մեջ (Վ. Գրիգորյան, Ռ. Ուռուտյան, Ժ. Մանուկյան և ուրիշներ)։

Այլ լեզուների ուսումնասիրություն. Հայ լեզվաբանները դրադվել են նաև այլ լեզուների ուսումնասիրությանը։ Ուշագրություն է դարձվել հին Առաջավոր Ասիայի լեզուներին, որոնց ուսումնասիրությունը արժեքավոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության, հայ ժողովրդի ծագման, հարևան ժողովուրդների հետ ունեցած նրանց մշակութային շփումների բացահայտման համար։ Ինչպես արդեն հիշատակվել է, Գ. Ղափանցյանը առաջիններից մեկն է, որ ավել է պալայերենի նկարագրությունը, իսկ Հ. Աճառյանը առաջինն է, որ կիրառում է խեթերենի և թուխարերենի նյութը։ Գ. Ջահուկյանը աշխատություն է նվիրել հայասերենին և հնդեվրոպական լեզուների հետ ունեցած նրա կապերին, ուսումնասիրել է էթնոկիպրերենը (էթնոկիպրական երկլեզվյան արձանագրության վերծանության փորձ), քննել է կլամեդների և նրանց լեզվի պոռթկմը, ինչպես նաև ուսումնասիրել է Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի մի շարք հնագույն լեզուներ՝ հայերենի հետ ունեցած նրանց փոխհարաբերությունը պարզելու նպատակով։ Հետազոտության առարկա է եղել ուրարտերենը, խուբերենը, ակկադերենը, արամեերենը, հին պարսկերենը՝ հատկապես այդ լեզուներով պատմական Հայաստանի տարածքում գտնված արձանագրությունների վերծանման և մեկնաբանման խնդիրների հետ կապված։ Այս ասպարեղում հայտնի են ինչպես լեզվաբանների (Գ. Ղափանցյան, Գ. Ջահուկյան), այնպես էլ պատմաբանների և արևելագետների (Մ. Իսրայելյան, Ա. Փերիխանյան, Ն. Հարությունյան, Գ. Տիրացյան, Վ. Խաչատրյան, Ն. Մկրտչյան, Հ. Կարադջույան և ուրիշներ) աշխատությունները։ Ուսումնասիրվում են նաև դասական լեզուները (է. Աղայան, Ա. Մուրադյան, Ծ. Հարությունյան), ինչպես նաև սանսկրիտը (Ն. Խաչատուրովա, Վ. Առաքելյան)։

Ժամանակակից արևելյան լեզուներից ուսումնասիրվում են պարսկերենը, թուրքերենը, արաբերենը՝ ինչպես արևելա-

դիտության ինստիտուտում, այնպես էլ Երևանի համալսարանի տրեկտգիտական ֆակուլտետում: Սովետական իշխանության տարիներին նշանակալից հաջողություններ են ձեռք բերվել բրդերենի և բրդական բանահյուսության ուսումնասիրության գործում, ինչպես նաև Անդրկովկասի տարածքի մի շարք այլ լեզուների հետազոտման բնագավառում (աղբբեջաներեն, վրացերեն, ուտիերեն): Հրատարակվել են նրանց քերականական կառուցվածքի առանձին հարցերին, հայերենի հետ ունեցած կապերին նվիրված մի շարք աշխատություններ ու հոդվածներ, ինչպես նաև ուսումնական ձեռնարկներ ու բառարաններ:

Ուսումնասիրվում են նաև դպրոցում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման առարկա հանգիստացող եվրոպական լեզուները (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն): Ստեղծվում են այդ լեզուների համար դասընթացներ և ուսումնական ձեռնարկներ, գրվում են նրանց քերականական կառուցվածքի առանձին կողմերին, հնչյունաբանությանը և բառապաշարին նվիրված դիսերտացիաներ, ինչպես նաև կատարվում է հայերենի և այդ լեզուների համակարգերի առանձին հատվածների զուգադրական վերլուծությունը:

Ռուսաց լեզուն ուսումնասիրվում է մի շարք հայեցակետերից: Այն ոչ միայն ինքնուրույն ուսումնասիրության առարկա է, այլև ենթարկվում է հայերենի հետ զուգադրական-տիպաբանական բնութայան, որի մասին արդեն խոսվել է: Վերջին ժամանակներս խորացել է ուշադրությունը ռուսերենի՝ որպես սովետական հաղորդակցման լեզվի, նկատմամբ: Երկլեզվության ու բազմալեզվության պրոբլեմների հետ կապված ուսումնասիրվում են հայ-ռուսերեն լեզվական փոխներթափանցումների բնույթն ու առանձնահատկությունները:



ՀԱՄԱՌՈՑ ՄԱՏՆՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայոց լեզու

1. Արեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, 19652
2. Ղարիբյան Ա. Ս., Հայոց լեզու, Երևան, 1934 և հաջ. հրատ.
3. Սևակ Գ. Գ., Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939
4. Кусикьян Н. К., Грамматика современного литературного армянского языка, Москва, 1950
5. Սևակ Գ. Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955
6. Աղայան Է. Բ., Բարսեղյան Հ. Խ., Հայոց լեզու, Երևան, 1965
7. Ջանուկյան Գ. Բ., Հայոց լեզվի դարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969
8. Առաքելյան Վ. Գ., Արբանյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Էրոյան Ս. Ա., Խաչատրյան Ա. Հ., Օհանյան Հ. Ա., Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու, I—III, Երևան, 1972—1979
9. Ջանուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան, 1974
10. Արբանյան Ս. Գ., Ժամանակակից հայոց լեզվի բերականություն, Երևան, 1975
11. Հայոց լեզու, I—II, Երևան, 1975—1980
12. Սևակ Գ. Գ., Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1936 և հաջ. հրատ.
13. Առաքելյան Վ. Գ., Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955
14. Մուրվալյան Ա. Ս., Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955
15. Վահանյան Գ. Հ., Հայոց լեզվի ոճագիտության ձևոնարկ, Երևան, 1955
16. Առաքելյան Վ. Գ., Հայոց լեզվի շարահյուսություն, I—II, Երևան, 1958—1964
17. Ղարազյուլյան Թ. Ա., Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1979
18. Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975

Հայոց լեզվի համեմատական փոփոխություն

19. Անատյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան, I—VII, Երևան, 1926—1935, I—IV2, Երևան, 1971—1979

20. Անադյան Հ. Հ., *Հայոց անձնանունների բառարան*, I—V, 1942—1962
21. Капанцян Г. А., К происхождению армянского языка, Ереван, 1946
22. Капанцян Г. А., Хайаса—колыбель армян, Ереван, 1948
23. Անադյան Հ. Հ., *Հիսկատար բերականություն հայոց լեզվի*, I—VI, *Երևան*, 1952—1964
24. Капанцян Г. А., Историко-лингвистические работы, I—II, Ереван, 1957, 1975
25. Զանուկյան Գ. Բ., *Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը*, *Երևան*, 1959
26. Ղառազյուկյան Թ. Ա., *Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը*, *Երևան*, 1961
27. Джаукян Г. Б., Урартский и индоевропейские языки, Ереван, 1963
28. Джаукян Г. Б., Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964
29. Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967
30. Զանուկյան Գ. Բ., *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, *Երևան*, 1972
31. Туманян Э. Г., Структура индоевропейских имен в армянском языке, М., 1978
32. *Հայոց լեզվի համեմատական բերականության հարցեր*, *Երևան*, 1979

Հայոց լեզվի պատմություն

33. Ղաերիրյան Ա. Ա., *Հայոց լեզվի պատմության ռուսամասիրության ներածություն*, *Երևան*, 1937
34. Անադյան Հ. Հ., *Հայոց լեզվի պատմություն*, I—II, *Երևան*, 1940—1951
35. Սևակ Գ. Գ., *Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմություն*, *Երևան*, 1948
36. Ղազարյան Ա. Ղ., *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, *Երևան*, 1954
37. Ղազարյան Ա. Ղ., *Միջին հայերեն*, I, *Երևան*, 1960
38. Ղազարյան Ա. Ղ., *Հայոց դրական լեզվի պատմություն*, Ա, *Երևան*, 1961
39. Ղափանցյան Գ. Ա., *Հայոց լեզվի պատմություն*, *Երևան*, 1961
40. Շանրազյան Տ. Ս., *Արևմտահայ աշխարհարարի առաջացումը*, *Երևան*, 1963
41. Գալստյան Ա. Ա., *Ակնարկներ աշխարհարարի պատմության*, *Երևան*, 1963
42. Աճեմյան Վ. Լ., *Գրական արևմտահայերենի կազմավորումը*, *Երևան*, 1971

43. Ակեաբկէնէր միջին գրական հայերենի պատմութեան, I—II, Երևան, 1972—1975
44. Իշխանյան Ռ. Ա., Արևիկահայ բանաստեղծութեան լեզվի պատմություն, Երևան, 1978
45. Իշխանյան Ռ. Ա., Նոր գրական հայերենը XV—XVIII դարերում, Երևան, 1979
46. Кусикьян И. К., Очерки исторического синтаксиса литературного армянского языка, М., 1959.
47. Туманян Э. Г., Очерки исторического развития надежных форм новоармянского литературного языка, М., 1962.
48. Գյուլբուրազյան Ս. Վ., Հայերենի ուղղագրութեան պատմություն, Երևան, 1973
49. Արեղյան Մ. Հ., Գրարարի քերականություն, Երևան, 1936
50. Արսևանյան Ա. Ա., Գրարարի ձևոնարկ, Երևան, 1952, 1958², 1974³, 1976⁴
51. Աղայան Է. Բ., Գրարարի քերականություն, I, Ա, Երևան, 1964
52. Туманян Э. Г., Древнеармянский язык, М., 1971

Հայ բարբառագիտություն

53. Ղաբիրյան Ա. Ս., Հայ բարբառագիտություն, Երևան, 1953
54. Գրիգորյան Ա. Վ., Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957
55. Ղաբիրյան Ա. Ս., Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958
56. Զանուկյան Գ. Բ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972
57. Հայերենի բարբառագիտական առյուծի նշուխների հավաքման ծրագիր, Երևան, 1975

Հայ բառաբանագիտություն

58. Մալխասյանց Ս. Ա., Հայոց լեզվի բացատրական բառարան, I—IV, Երևան, 1944—1945
59. Ռուս-հայերեն բառարան, I—IV, Երևան, 1954—1958
60. Սուխասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967
61. Ղաբիրյան Ա. Ս., Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968, 1976
62. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, I—IV, 1972—1980
63. Սուխասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975
64. Աղայան Է. Բ., Արցախի հայերենի բացատրական բառարան, I—II, Երևան, 1976

65. Զանովյան Գ. Բ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954
66. Աղայան Է. Բ., Հայ լեզվաբանության պատմություն, I—II, Երևան, 1958—1962
67. Խաչերյան Լ. Գ. «Գրչության արվեստի» լեզվա-քերականական ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962
68. Ամալյան Հ. Մ., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, I—III, Երևան, 1966—1973
69. Գապարյան Գ. Կ., Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1969
70. Մուրադյան Ա. Ն., Հունարան գարրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971
71. Զանովյան Գ. Բ., Գրարարի քերականության պատմություն XVII—XIX դդ.), Երևան, 1974:
72. Բաբսեղյան Հ. Խ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980

Ընդհանուր լեզվաբանություն

73. Ղափանցյան Գ. Ս., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1939
74. Առակ Գ. Գ., Խոսքի մասերի ուսմունքը, «Երևանի պետ. համալսարանի գիտական աշխատություններ», Երևան, 1939
75. Աղայան Է. Բ., Հեղհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, 1947
76. Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1949, 1959², 1962³
77. Զանովյան Գ. Բ., Լեզվաբանության պատմություն, I—II, Երևան, 1960—1962
78. Атаян Э. Р., Проблемы и методы структурального синтаксиса, Ереван, 1962
79. Атаян Э. Р., Понятие элементарной синтаксической структуры, Ереван, 1964
80. Абрамян Л. А., Гносеологические проблемы теории знаков, Ереван, 1965
81. Аветян Э. Г., Природа лингвистического знака, Ереван, 1968
82. Бругян Г. А., Гипотеза Сепира-Уорфа, Ереван, 1968
83. Բոտալան Գ. Ա., Փրիստոփայություն և լեզու, Երևան, 1972
84. Джаукян Г. Б., Общее и армянское языкознание, Ереван, 1978
85. Аветян Э. Г., Смысл и значение, Ереван, 1979
86. Արայան Է. Ռ., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերարերությունը, Երևան, 1981

ՀՈՎՍՏՓՅԱՆ ԼԻՆԱ ՍԱՄՎԵԼԻ
ՍՈՎԵՏԱՀԱՅ ԼԵԶՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ 60 ՏԱՐՈՒՄ

Նկարիչ Կ. Կ. Ղաֆադարյան
Դեղ. խմբագիր Հ. Ն. Գուրձակյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հաբուրյունյան




Հանձնված է շարվածքի 22. 07. 1982 թ.: Ստորագրված է տպագրության
9. 09. 1982 թ.: ՎՖ 06235, 84X1061/32, Թուղթ № 1: Տառատեսակ
«գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 4,81 մամ., տպադր.
5,75 մամուլ: Հրատ-հաշվարկ 3,97 մամուլ: Տպաքանակ 500:

Պատվեր № 877: Հրատ. № 5743: Գինը 65 կոպ.:


ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ:
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան,
Բարեկամության փ., 24:

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
ул. Барекамутян 24.



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0262885

65 4.:

A $\bar{u}$
68717